17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 155(5238)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# «Հայ բնակչությունը փոշիանում է»

*Ահազանգ «Ակօսից»*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Ահազանգը օգոստոսի 30-ի համարում հնչեցրել էր **«Ակօս»** օրաթերթը: Խոսքը Ստամբուլում բնակվող հայության մասին է: Պոլսահայ արտահայտությունը չենք օգտագործում, որովհետեւ նրանք վաղուց են լքել իրենց ծննդավայրը: Նրանց փոխարինել են այսպես կոչված Անատոլիայի տարբեր քաղաքներից Ստամբուլ մեկնած հայերը, որոնք մեծապես թուրքախոս էին: Թերեւս դրա պատճառով որքան էլ հայկական վարժարաններ հաճախեին, հայերենը այս հայերի երեխաների համար մայրենի լեզու չէր դառնում:

Ինչ վերաբերում է նրանց ազգանուններին, որոնք հաճախ «օղլու» վերջավորությունն ունեն, ապա դա էլ պետք է բացատրել «Անատոլիայի» հայության ավելի քան իրավազուրկ վիճակով: Թուրքիայում հայերի նկատմամբ չդադարող հալածանքները, համատարած հայատյացությունը, մշտական վախի պայմաններում գավառաբնակ հայերին զրկել էին անձնագրային թուրք աշխատողին հակաճառելու ամեն մի հնարավորությունից, որը կամայականորեն «յան» վերջավորությունը փոխարինում էր «օղլու»-ով, իսկ լավագույն դեպքում՝ «օղլու» չէր գրում: Թուրքահայը Քեմալ Աթաթուրքի ժամանակակից Թուրքիայում հետզհետե հայտնվում էր թուրքի ազգանունը կրելու հարկադրանքի տակ:

Գալով «Ակօսի» հոդվածին՝ ապա դա պատրաստել է **Արմեն Տատըրը**: Ստամբուլում հայ բնակչության փոշիացումը համարելով թուրքահայ համայնքի կենսական խնդիրներից, հեղինակը փոշիացման մասին պարզաբանումներ ստանալու խնդրանքով դիմել է Սահակ արք. Մաշալյանի կարծիքին:

Նախքան սրբազան հոր պարզաբանումներին անդրադառնալը, նշենք, որ ներկայումս Ստամբուլում բնակվում է շուրջ 60 հազար թուրքահայ: Մինչդեռ այդ ցուցանիշը 1927-ին Թուրքիայի Հանրապետությունում անցկացված առաջին մարդահամարի տվյալներով 140 հազար էր կազմում, ընդ որում ցուցանիշը չէր ընդգրկում ինչպես կաթոլիկ, այնպես էլ բողոքական հայերին:

Սահակ սրբազանը «Ակօսի» հեղինակի խնդրանքն ընդառաջելիս նշել է, որ վերջին տարիներին թաղման արարողությունները մշտապես կրկնապատկվում, նույնիսկ գերազանցում են մկրտության խորհրդակատարությունները: Նա բերել է 2012-ի օրինակը եւ ընդգծել, որ 2012-ին 482 թաղման ծեսի դիմաց կատարվեցին 236 մկրտություն եւ 191 պսակադրություն:

Տես էջ 3

# Նախագահը՝ Մոսկվա, նախարարը՝ Վարշավա-Հռոմ-Վատիկան

**Նախագահ Սերժ Սարգսյանը, ըստ պաշտոնական հաղորդագրության, սեպտեմբերի 16-ին մեկնել է Ռուսաստանի Դաշնություն՝ մասնակցելու Մոսկվայի հայոց առաջնորդանիստ եկեղեցու օծման եւ եկեղեցական համալիրի բացման արարողությանը:**

**Այսօր էլ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը կմեկնի Վարշավա, որտեղ նախատեսված է նրա հանդիպումը Լեհաստանի արտգործնախարար Ռադոսլավ Սիկորսկու հետ:**

**ԱԳՆ մամուլի հաղորդագրության համաձայն՝ սեպտեմբերի 18-20-ը նախարար Նալբանդյանը պաշտոնական այց կկատարի Հռոմ, որի ընթացքում հանդիպումներ կունենա Իտալիայի օրենսդիր եւ գործադիր իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Նախատեսված է նաեւ Էդվարդ Նալբանդյանի ելույթը Միջազգային հարաբերությունների իտալական ինստիտուտում:**




**Սեպտեմբերի 19-ին Էդվարդ Նալբանդյանը կմասնակցի Սուրբ աթոռում ՀՀ դեսպանատան բացման արարողությանը: Վատիկանում Հայաստանի արտգործնախարարը հանդիպում կունենա Սուրբ աթոռի պետությունների հետ հարաբերությունների գծով քարտուղար Դոմինիկ Մամբերտիի հետ:**

**Էստեղ են ասել՝ ամեն մարդ իրա դարդին...**

**Վ. Պ.**

# Հայկական աշխատաշուկայի պարադոքսը

*Բարձր գործազրկություն եւ մեծաթիվ թափուր աշխատատեղեր*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գործազրկության թեմային անդրադառնալով՝ մեր նախորդ համարներից մեկում («Ինչպես է փոխվել գործազրկությունը Հայաստանում վերջին տարիներին», **«Ազգ»**, 13.09.2013 թ.), գրել էինք, որ 2012-ին Հայաստանում գործազրկության մակարդակը կազմել է 16,4 տոկոս: Գործազրկության մակարդակի այս ցուցանիշը երկրորդ անգամն է գրանցվել մեր երկրում եւ ամենացածրն է վերջին 13 տարիների ընթացքում: Միեւնույն ժամանակ, նշել էինք, որ այս ցուցանիշը շարունակում է համարվել բարձր, քանի որ թվային առումով Հայաստանում գործազուրկ է աշխատունակ մոտ 1,2 մլն բնակչությունից ավելի քան 62 հազարը:

Սակայն գործազրկության բարձր ցուցանիշի հետ մեկտեղ, Հայաստանի աշխատանքի շուկան առանձնանում է մեկ այլ գործոնով՝ մի քանի հազար թափուր աշխատատեղերով: Այսինքն, մի կողմից ունենք 62 հազար գործազուրկ, մյուս կողմից՝ մոտ 3 հազար թափուր աշխատատեղեր միայն «Զբաղվածության պետական ծառայության» բազայում, չհաշված աշխատանքի տեղավորման գործակալությունների եւ կադրային կենտրոնների բազաները: Ընդ որում, սա ամբողջը չէ, քանի որ գործատուների մեծ մասը չի դիմում ոչ պետական, ոչ մասնավոր գործակալություններին, նախընտրում է աշխատակից փնտրել իր ծանոթների շրջապատում կամ պարզապես հայտարարություն փակցնելով իր օբյեկտի դռանը: Ամենակոպիտ հաշվարկներով, այս ամբողջը միասին միջին հաշվով Հայաստանում առկա է առնվազն մինչեւ 10 հազար թափուր աշխատատեղ: Սրա մեջ չենք ներառում ՏՏ ոլորտի թափուր աշխատատեղերը, որտեղ գործող ընկերությունների ղեկավարները պարբերաբար հայտարարում են, որ ոլորտում տարեկան 1000-2000 ծրագրավորողների պահանջարկ կա:

Որն է այս պարադոքսի պատճառը, ինչո՞ւ վերոնշյալ 62 հազարից 10 կամ 12 հազարը իր աշխատանքը չի գտնում թափուր աշխատատեղերի մեջ: Պատճառը մեկը չէ, ստեղված իրավիճակում կան օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներ:

Առաջին եւ թերեւս հիմնական պատճառը աշխատանքի վարձատրությունն է: Հայաստանում այս պահի դրությամբ միջին աշխատավարձը 155 հազար դրամ է, պետական համակարգում աշխատողներինը՝ 127 հազար դրամ պետական, մասնավորում՝186 հազար դրամ: Ի՞նչ աշխատավարձեր են առաջարկում թափուր աշխատատեղեր ունեցող մասնավոր ընկերությունները: Դրանք տարբեր են՝ կախված մասնագիտություններից, աշխատաժամանակից եւ գործատուի պահանջներից ու ֆինանսական հնարավորություններից:

Տես էջ 3

# Սիրիայի քիմիական զենքի ոչնչացումը կարժենա մոտ 150 մլն դոլար

**Սիրիայի քիմիական զենքը «հնարավորինս արագ» ոչնչացնելու վերաբերյալ շաբաթավերջին Ժնեւում ձեռք բերված ռուս-ամերիկյան համաձայնությունը շատ մեկնաբաններ անվանում են «պատմական ճեղքում» եւ Մոսկվայի «դիվանագիտական հաղթանակ»: Այս շաբաթ Ժնեւյան բանակցությունների արդյունքները քվեարկության կդրվեն ՄԱԿ-ի ԱԽ-ում:**

**ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի եւ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի ընդունած համաձայնագրում ասված է, որ Սիրիայի տարածքում գտնվող ամբողջ քիմիական զենքը պետք է ոչնչացվի մինչեւ 2014 թ. կեսերը, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Կողմերի նախնական գնահատման համաձայն, Սիրիան ունի մոտավորապես 1000 տոննա քիմիական զենք ու պայթուցիկներ, ինչպես նաեւ պղպեղային գազ: Ըստ որում, Քերրին առաջին անգամ հրապարակայնորեն խոստովանել է, որ քիմիական զենք ունի ոչ միայն Բաշար Ասադի վարչակարգը, այլեւ ընդդիմությունը:**

**Ֆինանսավորումն իրականացնելու պատրաստակամություն հայտնել էին թե՛ Մոսկվան եւ թե՛ Վաշինգտոնը: Ակնկալվում է նաեւ այլ երկրների մասնակցությունը: Փողով եւ տեխնոլոգիաներով օգնելու պատրաստակամություն է հայտնել Գերմանիան: Ինչ վերաբերում է զենքի ոչնչացման ծախսերին, ԱՄՆ-ը կարծում է, որ գործողությունը կարժենա 150 մլն դոլար: Ռուսաստանի կարծիքով, ծախսերն ավելի շատ կլինեն:**

# Ստուգվում են ոչ բոլոր խաղալիքները

*Թունավորում չի եղել, սակայն չի բացառվում, որ կլինի*

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**Գործող օրենքը պահանջում է, որ խաղալիքները պարտադիր սերտիֆիկացում անցնեն: Ներկրվող մանկական խաղալիքները նախկինում ստուգվում էին հենց մեր երկրի սահմանի վրա, սակայն հիմա օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ պարտադիր ստուգումն անցնում են միայն վաճառքի հանելուց առաջ:**

**«Սպառողների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Արմեն Պողոսյանը նշում է, որ կան զարգացած երկրներ, որտեղ նույնպես խաղալիքները ստուգվում ու սերտիֆիկացվում են վաճառքի դնելուց առաջ. «Օրինակ՝ այդպես է Դանիայում, սակայն Հայաստանը Դանիա չէ»: Արմեն Պողոսյանը, ըստ իր իրազեկվածության, ասում է, որ խաղալիքներից թունավորման դեպքեր Հայաստանում դեռեւս չեն արձանագրվել, սակայն չպետք է բացառենք, որ հետագայում կարող են արձանագրվել:**

**Արմեն Պողոսյանը, սակայն, նշում է դեպքեր, երբ խաղալիքները ստուգել են, դրանց մեջ գտել են թերություններ ու արգելել վաճառքը:**

**Խաղալիքների որակի վերահսկողությամբ զբաղվում է էկոնոմիկայի նախարարության համապատասխան ենթաբաժինը, սակայն, ըստ սպառողների պաշտպանի, բոլոր խաղալիքները չէ, որ անցնում են լաբորատոր փորձաքննություն: Իսկ խաղալիքների ստուգման մեխանիզմը հետեւյալն է՝ խանութ տանելուց առաջ նախ պետք է տարվի լաբորատորիա եւ ստուգվելուց հետո ստանա որակի վկայականը: Բայց օրենքից դուրս գործողները օրենքն էլ, մեխանիզմն էլ կարողանում են շրջանցել:**



**Երեկ «Զարկերակ» ակումբում՝ ասուլիսի ժամանակ սպառողների պաշտպանը խորհուրդ տվեց ապահովության համար խուսափել չինական խաղալիքներից: «Ազգի» հարցին՝ իսկ ինչպիսի՞ն է տեղական արտադրության խաղալիքների որակը, Արմեն Պողոսյանը պատասխանեց. «Տեղական խաղալիքները շուկայում քիչ են: Ամեն դեպքում՝ պետք է գերադասենք մեր արտադրանքը»: Բանախոսը հիշեց նաեւ «Արմենթոյ» խաղալիքներ արտադրող ընկերության մասին, որը փակվեց: (Ամերիկահայ Ռուբեն Թերզյանի հիմնած «Արմենթոյ» ձեռնարկությունը տարիներ առաջ, ցավոք, տեղացի պարտնյորի մեղքով ոչնչացվեց:**

Տես էջ 4

ԱԶԳ

## Ընթացիկ

ՀՀ նախագահի գյուղատնտեսության նախարարություն կատարած այցը լրատվամիջոցներում անհրաժեշտ ու պահանջված մակարդակով չլուսաբանվեց. այսպիսին է ոլորտի գործունեությամբ մտահոգ ՀՀ քաղաքացու մոտեցումը, որը երկրի պարենային ապահովությունում հիմնախնդիր համարվող կենդանական ծագման սննդի արտադրության ոչ բավարար վիճակի կապակցությամբ վերջին 5 տարիներին 7 ահազանգ է հղել երկրի բարձրագույն ղեկավարին: ՀՀ-ում արտադրվում է 1 բնակչի հաշվով անհրաժեշտ կազմել է 600 հազար, 45 տարի անց՝ 860 հազար: Հետագա 6-7 տարիներին, երբ նախկին տնտեսական հարաբերությունները վերացան եւ ՀՀ-ն ստիպված էր սեփական կարիքները բավարարել ներքին հնարավորությունների հաշվին, խոշոր եղջերավորի գլխաքանակը իջավ մինչեւ 500 հազարի: Մեզ պարտադրված պատերազմական վիճակն ավարտվեց, երկրի տնտեսությունում սկսվեց այսպես կոչված գյուղոլորտի բարեփոխումների գործընթացը, որը շարունակվում է արդեն 20 տարի, ամիսներով կամ տարիներով անլուծելի համարվող այս խնդիրը կարծես դյուրությամբ լուծեց երբեմնի պարենային գերխնդիր ունեցող Չինաստանը, ուր հաճախ են լինում ՀՀ բարձրագույն այրերը: Ընդամենը 20 տարվա ընթացքում, 1980-2000 թթ., խոզերի գլխաքանակը 240 մլն գլխից հասցվեց 440 մլն-ի, մերօրյա Չինաստանն արտադրում է այս մսատեսակի համաշխարհային 100 մլն տոննա արտադրության 50 մլն տոննան, իր 1 բնակչի հաշվով տարեկան 40 կգ, երբ ՀՀ ցուցանիշը դրա 10 տոկոսն էլ չէ: Համաշխարհային փորձն իր հերթին ուսուցանում

# Հայ գյուղաբնակը՝ իրական աջակցության կարոտ

առաջին անհրաժեշտության այս սննդատեսակներից մսի պահանջարկի հազիվ կեսը, կենդանական ծագման յուղի մի աննշան մասը, անորոշ է կաթնամթերքների արտադրության մեջ կաթի ու ներկրված կաթի փոշու հարաբերակցությունը: Միայն պանրի արտադրության նպատակով պահանջվում է նվազագույնը 350 հազար տոննա կաթի օգտագործում, երբ ՀՀ ողջ արտադրությունը 600 հազար տոննայի սահմաններում է: Պանրի արտադրության նպատակով օգտագործված կաթին հավելենք գյուղաբնակների սեփական կարիքների համար օգտագործվողը եւ նրանց կողմից անմիջապես իրացվողը, հարց է առաջանում, թե ինչ ծագում ունի ՀՀ առեւտրային ցանցում վաճառվող ողջ կաթնամթերքը:

ՀՀ քաղաքացին ակնկալում է, որ երկրի բարձրագույն ղեկավարի կոնկրետ ճյուղային ոլորտ կատարած այցը կազմակերպողները կիրականացնեն ամենայն մանրամասնությամբ ու շահագրգռությամբ: Ասենք, տնտեսական բլոկի պատասխանատուները, նկատի ունենք խորհրդականների ինստիտուտը, հանդիպումներ ու քննարկումներ կունենան, կներկայացնեն վարվող գյուղքաղաքականության այլընտրանքային եւ համաշխարհային փորձը, որոնց էլ հետագա գործնական իրականացումները կնպաստեն ՀՀ պարենային ապահովության այսօր խիստ խնդրահարույց հարցի կարգավորմանը: Խոսքս փաստեմ կոնկրետ ասելիքով: Հեռավոր 1941 թվականին, երբ ՀՍՍՀ բնակչությունը հազիվ 1,3 մլն էր, հանրապետությունում խոշոր եղջերավորների գլխաքանակը պաշտոնավարած գյուղնախարարներն իրար են հաջորդում, իսկ կոնկրետ 1941 թվականի նշված ցուցանիշը դեռ որոշակի չի ապահովվել. ՀՀ-ում խոշոր եղջերավորի գլխաքանակը վերջին տարիներին, ըստ ՀՀ ԱՎԾ տեղեկատվության, 600 հազար գլխի սահմաններում է, թեեւ տարիներ շարունակ այստեղ հաշվառելու պարտավորությունը եւս չի կատարվում:

Համանման պատկեր է նաեւ անասնապահության մյուս ճյուղերում, ասենք, խոզաբուծությունում: Դարձյալ հեռավոր 1961 թվականին ՀՍՍՀ-ում խոզերի գլխաքանակը մոտ 130 հազար էր, 25 տարի անց՝ 344 հազար, 2010-ականներին՝ 100 հազար: Վերջին թվի խիստ անբավարարության հետեւանքներին հայ սպառողը մշտապես առնչվում է առեւտրային ցանցում, երբ ծանոթանում է արտերկրներից Հայաստան հասցված այս մսի եւ կրկնակի բարձր վաճառվող տեղական խոզի մսի գներին, որը պարզապես անհասանելի է երկրի բնակչության բացարձակ մեծամասնությանը: Եվ հարցը՝ թե ինչու չի բավարարվում այս մսատեսակի հանդեպ հայ սպառողի պահանջարկը, հնչում է ինքնաբերաբար: ՀՀ նախագահին ուղղված ահազանգերից մեկի առիթով ՀՀ գյուղնախարարի պատասխանից պարզվում է, որ երկրում խոզամայրերի անհրաժեշտ գլխաքանակ չկա: Արդյո՞ք այս խնդիրը բարձրացվել է այցի ընթացքում, փորձ արվե՞լ է որեւէ լուծում գտնելու: Չէ՞ որ հայտնի է, որ այս անասնատեսակը տարվա կտրվածքով մինչեւ 15 ծին է երաշխավորում, որոնց որոշակի մասը ապագա խոզամայրեր են: Մեզանում գրեթե է, որ հիմնականում անասնապահական ոլորտում է հանրությունը տեսնում իր պարենապահովության բավարարումը, տարերային աղետներից առավելագույն պաշտպանվածությունը եւ գյուղաբնակի կողմից պարբերաբար նյութական ու ֆինանսական միջոցների ստացումը:

Այսօրինակ հարցերը գուցե լրագրային քննարկման ու լուսաբանման թեմա չդառնան, եթե լուծվեն համապատասխան կառույցներում: Լսելով ոլորտի պատասխանատուների բացատրություններն ու մեկնաբանությունները՝ համոզվում ես, որ հայաստանաբնակը դեռ երկար է ապրելու իր սննդակարգը ներկրվող հիմնական պարենմթերքներով բավարարելու վիճակը: Մտահոգիչն այստեղ այն է, որ դա տեղի է ունենում, ասենք, Չինաստանի եւ շատ այլ երկրների համեմատ մեր գրեթե կրկնակի-եռակի վարելահողային կարողունակության պարագայում. հիմնական գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար նպաստավոր այսօրինակ հողատարածքը 1 չինացու հաշվով կազմում է հազիվ 1000 քմ, ՀՀ-ի պայմաններում՝ մոտ 2000 քմ:

ՀՀ գյուղոլորտում այսօրինակ խնդիրները շատ են, եթե չափից շատ չասենք: Երկու տասնամյակ շարունակվող այս վիճակը գնալով խորանում է, որի ապացույցը հայ գյուղի ու գյուղացու խիստ մտահոգիչ ու ահազանգող դրությունն է, իրական աջակցության կարոտ կարգավիճակը:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ
2006-08 թթ. գյուղնախարարի խորհրդական

# Կարճամետրաժ ֆիլմի պրեմիերա Գյումրիում՝ «Քո րոպեն»

Գյումրու արվեստների ակադեմիայի դահլիճում կայացել է «Քո րոպեն» վերնագրով կարճամետրաժ ֆիլմի պրեմիերա: Կինոնկարի հեղինակը Երեւանի թատրոնի եւ կինոյի ինստիտուտի տեղի մասնաճյուղի ուսանող Հովիկ Սաֆարյանն է:

Գյումրիում նկարահանված տասնհինգ րոպեանոց կինոնկարում, որի դերակատարները Հովիկ Սաֆարյանն ու նրա համակուրսեցի Քրիստինե Ջիրոյանն են, արծարծվում է երբեմն նաեւ անտեղի կորուստների պատճառ դարձող մարդկային անտարբերության, կյանքի մանրուքներին ուշադրություն դարձնելու կարեւորության թեման:

«Մենք ուզում ենք, որ մարդիկ ավելի ուշադիր լինեն, այսքան անտարբեր չլինեն իրար, իրենց կողքից անցնող ամեն մարդու նկատմամբ,- ասել է ֆիլմի գլխավոր դերակատարուհին:- Պետք է ուշադիր լինել եւ կարեւորել կյանքի ամեն մի ակնթարթը: Մենք պետք է սովորենք գնահատել եւ ուշադրություն դարձնել այդ ամենին»:

Գ. Մ.

ԲՆԱՊԱՀՊԱՆ

# Երեւան, Արարատ, Ալավերդի, Հրազդան. հանրապետության ամենաաղտոտված քաղաքները

**Օզոնային շերտի քայքայումը վաղուց դուրս է եկել բնապահպանների քննարկման շրջանակից եւ վերածվել համամարդկային խնդրի: Այսօր օզոնային շերտի քայքայման վերաբերյալ քննարկումներն ու կոնֆերանսներն ավելի են հաճախակի են դարձել, քան նախորդ դարի կեսերին՝ 70-ականներին, երբ օզոնային անցքերի վերաբերյալ հրապարակվեց առաջին հետազոտությունը:**

**Գլոբալ առումով օզոնի հարցը դարձավ լուրջ քննարկման առարկա, երբ 1985-ին բրիտանացի գիտնական Ջո Ֆորմանի հետազոտական խումբը արձանագրեց Անտարկտիդայում օզոնային շերտի սաստիկ քայքայում, եւ ամերիկյան արբանյակները դա հաստատեցին:**



**80-ականների վերջերից օզոնի հարցը դարձավ քննարկման առարկա բոլոր ոլորտներում: Մտավորականներից մինչեւ քաղաքական գործիչներ օզոնի շերտի պահպանման կոչեր էին անում: Բնապահպանության եւ օզոնի հարցն անգամ նախընտրական քարոզարշավում ընդգրկվեց: Մասնավորապես ԱՄՆ դեմոկրատ թեկնածու Ալբերտ Գորը Ջորջ Բուշ կրտսերի հետ նախընտրական քարոզարշավի ժամանակ ծրագրերում ընդգրկել էր նաեւ բնապահպանությունն ու օզոնի պահպանման հարցը:**

**Թեպետ օզոնային շերտի մասին շատերն են խոսում, բայց քչերը գիտեն՝ ի՞նչ է այն եւ նրա բացակայությունն ինչպիսի վնասներ կարող է պատճառել մարդկությանն ու Երկիր մոլորակին: Ըստ բնապահպանների եւ աստղագետների՝ օզոնը բաղկացած է «աստղային փոշուց» եւ կարեւորագույն տարր է, որը պաշտպանում է Երկիր մոլորակը տիեզերքից եկող վնասակար նյութերից: Օզոնային շերտը գտնվում է երկրագնդի մակերեւույթից 10-16 կմ բարձրության վրա եւ համարվում է երկրագնդի պաշտպանիչ վահանը: Օզոնը վնասազերծում է Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթումը՝ պաշտպանելով կյանքը Երկրի վրա: Օզոնային անցքերի միջոցով Արեգակի վրա տեղի ունեցող պայթյունների ուլտրամանուշակագույն ճառագայթներն անարգել ներթափանցում են Երկիր, առաջ բերելով բազմաթիվ հիվանդություններ: Իր առավելագույն չափին օզոնի խոռոչը հասել է 2006-ին: Սառնարաններում, օդորակիչներում օգտագործվող ֆրեոնները, կրակմարիչներով օգտագործվող հալոններն ու մեթիլ բրոմիդները, որ այսօր մեր կենցաղի անբաժան մասնիկներն են, քայքայում են օզոնի շերտը:**

**Օզոնային շերտի պահպանման նպատակով ընդունվել են մի շարք կոնվենցիաներ, հետագայում կազմվեցին արձանագրություններ: Օզոնային շերտի պահպանության համար թերեւս ամենաարդյունավետը օզոնային շերտը քայքայող նյութերի մասին օրենքի ընդունումն էր, որով սահմանափակվում եւ արգելվում էր օզոնային շերտը քայքայող նյութերի արտադրությունը:**

**Հայաստանը նույնպես ընդունել է այդ օրենքը, սակայն չի կարելի ասել, որ այդ օրենքը պահպանվում է կամ արդյունավետ է: Խնդիրն այն է, որ մեր երկրում օդը խիստ աղտոտված է, եւ դրա համար առկա է երկու պատճառ՝ բաց եղանակով հանքերի շահագործում եւ կանաչ տարածքների ոչնչացում:**

**Մեր երկրում օդն առավելապես աղտոտված է Երեւանում, Ալավերդիում, Հրազդանում եւ Արարատում: Սրանք այն քաղաքներն են, որտեղ գործում են մի քանի տասնյակ հանքեր: Միայն Երեւանում բաց շահագործմամբ 29 հանք է գործում: «Էկոլոգիական ամենամեծ ռիսկը մայրաքաղաքում է: Հանքերի շահագործման եւ չավարտվող շինարարական աշխատանքների հետեւանքով փոշի է կուտակվում եւ օդի աղտոտվածությունն ավելի է մեծանում: Այսօր մայրաքաղաքում օդի մեջ առկա փոշին 9 անգամ գերազանցում է նորման», ասում է բնապահպան Կարինե Դանիելյանը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Մոսկվայում անցկացվեց դատախազների միջազգային ասոցիացիայի 18-րդ կոնֆերանսը

Սեպտեմբերի 8-ից 12-ը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում անցկացվեց Դատախազների միջազգային ասոցիացիայի 18-րդ կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում էր նաեւ Հայաստանից ժամանած պատվիրակությունը, որը գլխավորում էր ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մնացական Սարգսյանը: Պատվիրակության կազմում էր նաեւ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական կապերի բաժնի պետ Նելլի Հարությունյանը:



Դատախազների միջազգային ասոցիացիան (ԴՄԱ), որն այսօր համախմբում է աշխարհի 150 պետություն եւ ունի շուրջ 250.000 անդամ, հիմնադրվել է 1995 թվականին, Վիեննայում, ՄԱԿ-ի հովանու ներքո: Արտաքաղաքական եւ ոչ կառավարական կառույց է, ստեղծվել է անդրազգային հանցավորության, մասնավորապես թմրամիջոցների ապօրինի շրջանառության, հանցավոր ճանապարհներով ձեռք բերված եկամուտների եւ փողերի լվացման դեմ ընդհանուր ուժերով եւ օպերատիվ կերպով արդյունավետ պայքարելու անհրաժեշտությունից ելնելով:

Ասոցիացիայի հիմնական նպատակը մարդու իրավունքների պաշտպանման, օրենքի գերակայության, քրեական հետապնդման համընդհանուր չափանիշների կիրառման, քրեական գործերի արդար, անկողմնակալ եւ արդյունավետ քննության ապահովումն է:

ՀՀ գլխավոր դատախազությունը Դատախազների միջազգային ասոցիացիային անդամագրվել է 1999 թ. մայիսից, եւ գործնականում, հանցագործությունների բացահայտման առումով, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում այդ հեղինակավոր կառույցի աշխատանքներին:

Մոսկովյան համաժողովը հանդիսավորությամբ բացեցին Դատախազների միջազգային ասոցիացիայի նախագահ Ջեյմս Համիլտոնը եւ ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկան:

ՌԴ գլխավոր դատախազն անդրադարձավ Ասոցիացիայի առջեւ ծառացած հիմնախնդիրներին, հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության անդամ դատախազների գործունեությանն ու ներկայացրեց կոնֆերանսի ընթացքում քննարկվելիք հարցերի շրջանակը:

Միջազգային նման համաժողով, որին մասնակցում էին աշխարհի 90 երկրներից ժամանած ավելի քան 800 պատվիրակներ, Մոսկվայում անցկացվում է առաջին անգամ, եւ աննախադեպ էր իր ներկայացուցչական կազմով: Մասնակիցների թվում էին ԱՄՆ-ից, Ավստրալիայից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Կանադայից, Ինդոնեզիայից, Չինաստանից, Բրազիլիայից, Արգենտինայից, Հարավային Աֆրիկայից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Իտալիայից, Թաիլանդից, Սաուդյան Արաբիայից, Ճապոնիայից, Նորվեգիայից, Շվեդիայից, Լեհաստանից, ԱՊՀ երկրներից, ինչպես նաեւ միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպություններից (ՄԱԿ, Եվրոմիություն, Եվրոխորհուրդ եւ այլն) ժամանած բարձրաստիճան պաշտոնյաներ:

Մոսկովյան կոնֆերանսի պատվիրակությունների շուրջ 70 տոկոսը գլխավորում էին պետությունների գլխավոր դատախազները, եւ հանգամանքների բերումով, այնպես էր ստացվել, որ համաժողովի անցկացումը համընկել էր ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի պաշտոնավարման լիազորությունների սահմանադրական ժամկետը լրանալու ժամանակահատվածին:

Կոնֆերանսում ունեցած իր ելույթում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Մնացական Սարգսյանն** ընդհանուր գծերով ներկայացրեց ՀՀ դատախազական համակարգի փոխհարաբերություններն այլ պետությունների դատախազությունների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների հետ՝ նշելով, որ Հայաստանի դատախազությունն իր գործունեության մեջ առանձնակի տեղ է հատկացնում միջազգային իրավական կապերի ամրապնդմանը եւ հանցավորության դեմ պայքարում այլ երկրների դատախազական կառույցների հետ համագործակցության սերտացմանը, փորձում երկկողմանի համաձայնագրերով կարգավորել հարեւան, եւ, ընդհանրապես, այլ երկրների դատախազական կառույցների հետ համագործակցությունը:

Կոնֆերանսի ընթացքում հնչեցին բազմաթիվ ելույթներ, իրավական աշխարհին հուզող մի շարք հրատապ հարցերի շուրջը տեղի ունեցան բուռն եւ ակտիվ քննարկումներ, կնքվեցին միջազգային պայմանագրեր եւ համաձայնագրեր:

Կոնֆերանսի եզրափակիչ նիստում, երկարատեւ բանավեճերից եւ քննարկումներից հետո, փակ գաղտնի քվեարկությամբ՝ ձայների ճնշող մեծամասնությամբ, Դատախազների միջազգային ասոցիացիայի նոր նախագահ ընտրվեց Ավստրիայի դատախազների ազգային ասոցիացիայի ղեկավար Գերհարդ Յարոշը, իսկ ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկան ԴՄԱ-ի դրոշը հանդիսավորությամբ հանձնեց Արաբական Միացյալ Էմիրությունների գլխավոր դատախազ Յուսիֆ Ալմուսավային, քանի որ 2014 թվականին միջազգային հաջորդ համաժողովը տեղի է ունենալու Դուբայում:

**ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ**
**Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից**

ՍՏԱՄԲՈՒԼ

# «Հայ բնակչությունը փոշիանում է»

*1-ին էջից*

**Այնուհետեւ Սահակ սրբազանը շարունակել է. «Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ այս տարբերությունը ապագայում էլ ավելի կաճի: Հողասահք ենք ապրում, որի ընթացքին ամեն ինչ սպառվելու է: Հազիվ մի քանի աշակերտներով պիտի ջանանք բաց պահել մեր դպրոցները: Երբ վախճանվեն ներկայումս եկեղեցի փութացող տարեցները, ապա նույն պատկերին ականատես կլինենք նաեւ եկեղեցիներում:**

**Այս ամենին պետք է ավելացնել նաեւ 30 տոկոսին հասնող խառը ամուսնությունները եւ նրանց սերնդի հավանական կորուստը: Ավելին, որքան էլ դանդաղ ընթանա, արտագաղթն այնուամենայնիվ շարունակվում է: Դեռ պետք է նկատի առնել երկրից փախչելու տրամադիր փոքրամասնության հոգեբանությունը:**

**Մի պահ մտածենք. կարո՞ղ է ստամբուլահայությունը դիմանալ այնպիսի նոր սարսափի, ինչպիսին էր Հրանտ Դինքի սպանությունը: Ի՞նչ ազդեցություն կունենա Սամաթիայի հարձակումների կրկնությունը համայնքի վրա: Որքա՞ն կհարատեւի փոքրամասնությունների նկատմամբ ներկայիս մեղմ քաղաքականությունը Թուրքիայում: Ի՞նչ վիճակում կհայտնվենք, եթե երկրում իշխանության գան ազգային դիմագծով կառավարություններ, ինչպես եկել էին 70-ական թթ.: Ասված մի արասցե, Միջին Արեւելքի բախումները տարածվեն մեր երկրում կամ բռնկվեն թուրք-քրդական բախումներ: Եթե ներկա դրությամբ բացվի հայ-թուրքական սահմանը, ապա անկասկածելիորեն բնակչության ներհոսքը տեղի կունենա դեպի մեր կողմը: Բայց առկա է նաեւ դրա հակապատկերը: Եթե Հայաստանը բարեկարգի իր խնդիրները, ապա Սփյուռքի համար կդառնա ձգողականության կենտրոն եւ այս անգամ մենք կգաղթենք հայրենիք»:**

# Հայկական աշխատաշուկայի պարադոքսը

*1-ին էջից*

**Օրինակ՝ մի դեպքում խոհարարին կարող է առաջարկվել 100 հազար դրամ աշխատավարձ առավոտյան 9-ից մինչեւ երեկոյան 21-ը (12 ժամ), իսկ մեկ այլ դեպքում՝ 2 ժամ պակաս խոհարարի աշխատանքի դիմաց՝ 80 հազար դրամ: Երկու դեպքում էլ առաջարկվող աշխատավարձը ցածր է միջին աշխատավարձից, ինչն էլ այս մասնագիտության թափուր աշխատատեղերի առկայության պատճառն է: Նման իրավիճակ է ստեղծված կահույքագործ, հացթուխ, վարորդ, անվտանգության աշխատակից, դեղագետ, ավտոէլեկտրիկ եւ մի շարք այլ մասնագիտությունների մասով:**

**Խոսելով պահանջարկ ունեցող մասնագիտությունների մասին՝ թվարկենք դրանցից հիմնականները՝ դիմահարդարներ, վարսահարդարներ, մատնահարդարներ, ավտովերանորոգողներ, էլեկտրիկներ, կարողներ, կոշկագործներ, կռունկավարներ, փականագործներ, խառատներ, հղկողներ, ատաղձագործներ, եռակցողներ, հրշեջներ եւ այլ մասնագիտություններ: Ամենամեծ պահանջարկն ու մշտապես առկա թափուր աշխատատեղեր կան մատուցողների, վաճառողների, հսկիչ-վաճառողների, առաքիչ-վարորդների եւ հատկապես հավաքարարների համար: Վերոնշյալ բանվորական մասնագիտությունների մասով, բացի աշխատավարձերից, մեծաթիվ թափուր աշխատատեղերի առկայությունը պայմանավորված է նրանով, որ չկան կամ գրեթե չկան ուսումնական հաստատություններ, որոնք պատրաստում են այս մասնագետները: Նախկին պրոֆտեխուսումնարանները նոր նոր են սկսում ոտքի կանգնել, վերածվելով արհեստագործական դպրոցների: Մինչ դրանք կայանան եւ մասնագետներ պատրաստեն, այս աշխատատեղեր գծով թափուր աշխատատեղերը դեռ կլինեն:**

**Դրա հետ մեկտեղ այնպես չէ, որ մտավոր աշխատանք պահանջող թափուր աշխատատեղեր չկան: Բացի արդեն հիշատակված որակյալ ծրագրավորողներից՝ մեր աշխատաշուկան կարիք ունի նաեւ տնտեսագետների, ճարտարագետների, հաշվապահների, դասավանդողների, դաստիարակների, ուսուցիչների, մենեջերների, գործակալների, դիզայներների, սարքավորումների եւ համակարգչային օպերատորների: Մարզերում սուր պահանջարկ կա տարբեր նեղ մասնագիտացումներով բժիշկների, այն դեպքում, երբ Երեւանը գերհագեցած է բժշկական կադրերով: Այստեղ թափուր աշխատատեղերի կարեւոր պատճառ է այդ մասնագիտություններն ունեցող մարդկանց ավելի բարձր աշխատավարձի ակնկալիքը, ինչը շատ դեպքերում չի բավարարվում, իսկ ավելի ցածր աշխատավարձով առաջարկին էլ աշխատանք չունեցողները չեն համաձայնվում:**

**Մյուս կողմից, նշենք, որ շատ հաճախ բարձր աշխատավարձով աշխատանքից հրաժարվողներ են լինում: 100 հազար դրամ գումարած որոշակի տոկոսներ, որոնցով ներառյալ ընդհանուր վարձատրությունը կկազմի 150 հազար դրամ վարորդ-առաքիչի աշխատանքը համարվում է ցածր վարձատրվող: Նույնը նաեւ հասարակական տրանսպորտի ավտոբուսների վարորդների աշխատանքը, որտեղ ընդհանուր վարձատրությունը 200 հազար դրամից ցածր լինելու դեպքում վարորդները հրաժարվում են աշխատել: Օրինաչա՞փ է նման իրավիճակը, թե՞ ոչ, դժվար է գնահատել: Այդուհանդերձ, թեկուզ ժամանակավորապես աշխատելն ավելի նախընտրելի է, քան աշխատանքի բացակայությունից դժգոհելը:**

**Ասվածին ավելացնենք նաեւ գործատուների պահվածքն ու առաջարկվող աշխատանքի պայմանները, որոնք վանում են տվյալ հաստատությունում աշխատելուց՝ անկախ աշխատավարձի բարձր կամ ցածր լինելուց: Գործատուներից, հատկապես փոքր ու միջին ձեռնարկությունների, շատերի ընկալմամբ աշխատողներն ասես իրենց սեփականությունը լինեն՝ դրանից բխող բոլոր շատ հետեւանքներով՝ դաժան շահագործում, աշխատավարձի չվճարում, կոպիտ վերաբերմունք, լրացուցիչ պարտավորությունների բարդում եւ այլն: Սրանք միայն մի մասն են այն շատ իրողությունների, որոնց հանդիպում են աշխատանք փնտրողները:**

**Ինչ մնում է պետական համակարգին, ապա այստեղ թափուր աշխատատեղերի գլխավոր պատճառը ֆինանսականն է՝ ցածր աշխատավարձերը, որոնք չեն դիմանում մասնավորի մրցակցությանը: Պակաս դեր չեն խաղում զանազան ինտրիգները, մեկը մյուսից բամբասելն ու բողոքելը վերադասին, գերատեսչության ղեկավարների «մարդը» լինելու կամ չլինելու հետ կապված կարգավիճակը, սուբյեկտիվ նկատողությունները եւ այլն: Ակնալվում է, որ պետական համակարգում թափուր աշխատատեղերի հարցը որոշակիորեն կլուծվի եկող տարվանից, պայմանավորված քաղծառայողների աշխատավարձերի սպասվող նկատելի բարձրացումով:**

**Այնուամենայնիվ, մեծ գործազրկության եւ զգալի թափուր աշխատատեղերի առկայությունը մեր երկրում ոչ մի կերպ նորմալ համարել չի կարելի: Պետությունը կարող է նպաստել այս հարցի լուծմանը պետական աշխատատեղերի վարձատրության ավելացմամբ, կրթական համակարգում առավել պահանջարկ ունեցող մասնագիտությունների ուսուցման տեղերի ավելացմամբ, մասնավորները՝ գոնե աշխատանքային պայմանների եւ հնարավորինս մրցունակ աշխատավարձերի վճարմամբ, իսկ աշխատանք փնտրողներն էլ՝ նախապատվություն տալով աշխատելուն՝ աշխատանքի չլինելու պատճառաբանություններով արդարանալու փոխարեն:**

# Ինչու է ոստիկանը «վատը»

Մի որոշ ժամանակ առաջ, երբ քայլում էի փողոցով, վիճաբանող մարդկանց կողքից անցնելիս լսեցի հետեւյալ խոսքերը՝

- Մարդ ենք, հո միլիցա չենք:

Նման դեպքերը բացառություններ չեն: Այս տարվա օգոստոսի վերջերին մարդկանց ու ոստիկանների միջեւ Կոմիտասի փողոցում տեղի ունեցած բախումը ոստիկան-քաղաքացի հարաբերությունների ներկա ցավալի վիճակի ակնառու օրինակ էր: Ինտերնետային մեկնաբանություններում ոստիկաններին համեմատում են թուրքերի հետ, այլ կերպ՝ թշնամու: Նրանք ավելի վատն են, քան թուրքերը, նրանք թշնամիներ են: Օրենքի մարդու հանդեպ նմանօրինակ ակնածական եւ սիրալիր վերաբերմունքի, անկասկած, ականատես եք եղել նաեւ Դուք, հարգելի ընթերցող, եւ միգուցե ինձ պես հարցրել եք, թե որտեղից են գալիս այդ հիրավի աստվածահաճո կանխատրամադրվածության եւ բարոյափիլիսոփայական ընդհանրացումների ակունքները: Ոստիկանի հանդեպ նման վերաբերմունքը ինքնին հետաքրքրական է, քանի որ նախ տարածված է հասարակության լայն շերտերում, երկրորդ՝ աչքի է զարնում այդ վերաբերմունքի մեջ առկա անհասկանալի պարադոքսը՝ ինչպես կարող է սովորական մարդը նման վերաբերմունք ունենալ որոշակի ինստիտուտի հանդեպ, որը ստեղծված է հենց իր շահերը պաշտպանելու համար: Այս պարադոքսը էլ ավելի հետաքրքրական ու խճճված է դառնում, երբ ոստիկանի հանդեպ բացասական կարծիք հայտնած մարդուն խնդրում ես բացատրել, թե ինչու է նա այդպես արտահայտվում օրենքի պաշտպանների նկատմամբ:

Ամենից հաճախ հնչող պատասխանն այն է, թե կան ոստիկաններ, որոնք չարաշահում են իրենց լիազորությունները, պատժում են անմեղ մարդկանց: Այստեղից էլ, ասում են նրանք, ոստիկանի հանդեպ թշնամանքը:

Սակայն, ըստ իս, նման կերպ ոստիկանի հանդեպ անհանդուրժողականությունը բացատրելը հիմնավորապես սխալ է, թեկուզ այն պատճառով, որ կան այլ դասի պարոնայք եւս, որոնք չարաշահում են իրենց լիազորությունները, որոնց հետեւանքով մարդկանց վնասները ավելի մեծ են: Ասենք, պետական չինովնիկները, որոնք կարող են յուրացնել պետության միջոցները, բժիշկները, որոնց սխալից մարդիկ են մեռնում, կամ սովորական հանցագործները եւ այլք, ում հանդեպ, սակայն, ատելության եւ անհանդուրժողականության անգիտակցական զգացումները չեն ուղղորդվում: Նշված բացատրության հաջորդ թույլ կողմն այն է, որ անհանդուրժողականությունը դրսեւորվում է ոչ թե «վատ ոստիկանի», այլ ընդհանրապես ոստիկանի նկատմամբ: Այլ կերպ, ատելությունն ու անհանդուրժողականությունն ուղղված են ոչ թե առանձին ոստիկանի, առանձին անձի նկատմամբ, այլ ոստիկան ԳԱՂԱՓԱՐԻ՝ վերացարկված բոլոր անձնային հատկանիշներից: Ընդ որում, որ ոստիկանը վատն է, ոստիկանին ու արդարադատությանը դիմողը՝ գործ տվող, դառնում են աշխարհայացքի տարր, իսկ «մի մատնիր» սկզբունքը (այսինքն՝ մի մատնիր հանցագործին) վերածվում է գրեթե բարոյականության սկզբունքի, իսկ նրա կիրառությունը ապահովվում է հասարակական կարծիքի ճնշմամբ՝ ստորացնելով ու արհամարհելով բոլոր նրանց, ովքեր խախտել են տաբուն (մի մատնիր):

Ոստիկանների հետ վերջին ընդհարումների ժամանակ մարդկանց ատելության պոռթկումների մեջ ուշադիր զննող աչքը կարող էր նկատել, որ ամբոխը ենթագիտակցաբար իրեն վերագրում էր զոհի կարգավիճակը: Մարդիկ կանխապես համոզված են, որ ոստիկանները ցանկանում են իրենց վնասել, ոստիկանի նույնիսկ ամենաչնչին հպումը հրմշտոցի մեջ ընդունվում էր որպես ոտնձգություն, որպես բռնանալու փորձ, հանգիստ հորդորանքը ընկալվում էր թշնամությամբ: Իր պարտականությունները կատարող ոստիկանի վրա գոռալը, նրան ակնհայտ վիրավորելը դիտվում է նորմալ, բնական մի բան:

Մնում է հասկանալ, թե սոցիալական ինչպիսի միջավայրում է առաջ եկել ու զարգացել ոստիկանի հանդեպ այսպիսի վերաբերմունքը:

Այս հարցի պատասխանները ստանալու համար պետք է խորամուխ լինել այն հասարակական պայմանների մեջ, որոնցում դաստիարակվել են այդպիսի մտածելակերպ կրող մարդիկ: Ընդ որում պետք է ըմբռնել, որ ոստիկանի հանդեպ վատ վերաբերմունքը ոչ թե սովորական անհարգալից վերաբերմունք է, այլ՝ ԻԴԵՈԼՈԳԻԱ: Սա այն դեպքը չէ, երբ որեւէ մեկին ատում են, որովհետեւ նա վատն է: Ոստիկանին ատում են, որովհետեւ նա ոստիկան է, մարդկանց համար լավ կամ վատ ոստիկան չկա: Ատելությունը կանխապես ուղղված է օրենքի եւ ոստիկան գաղափարի նկատմամբ եւ հետո նոր միայն պրակտիկ կիրառություն է ստանում ու տարածվում նրանց հանդեպ, ովքեր հագնում են ոստիկանի համազգեստը: Իրերի այսպիսի ընկալումը շատ կարեւոր է հասկանալու համար այս երեւույթի արմատները:

Ներկա հասարակության կորիզը՝ 20-60 տարեկան բնակչությունը, ծնվել եւ դաստիարակվել է մոտավորապես 1950-1990 թթ., այսինքն մենք գործ ունենք տիպիկ խորհրդային միջավայրում մեծացած մարդկանց հետ: Հետեւաբար ոստիկանի հանդեպ այդպիսի իդեոլոգիան ակնհայտորեն զարգացել ու ձեւավորվել է հենց խորհրդային հասարակարգում, եւ ինչպես մենք կփորձենք ցույց տալ, օրենքի հանդեպ անհանդուրժողականությունը հենց այդ հասարակարգի զավակն է: Խորհրդային հասարակարգը, կամ հանրային արտադրահարաբերությունները հիմնվում են երկու հիմնական սկզբունքի վրա.

1. սեփականության հանրային ձեւ (հողը եւ մնացած արտադրության միջոցները պատկանում են բացառապես պետությանը),
2. պլանային կառավարում (մարդիկ ինքնուրույն որոշում կայացնելու իրավունք չունեն, պլանները պարտադրվում են վերեւից):

Երբ սեփականությունը պատկանում է պետությանը, բոլորը սկսում են գողանալ այդ սեփականությունը: Գյուղացին գողանում է կոլտնտեսության բերքը ու խուսափում է այնտեղ աշխատելուց (թող ուրիշներն աշխատեն քեռի Գագոյի համար, հետո բերքը հավասար կիսվելու է կոլխոզի անդամների միջեւ): Իսկ բանվորը գողանում է գործարանից, որը եւս պատկանում է պետությանը: Սա հաստատելու համար բավական է հարցնել որեւէ տարեց մարդու՝ նրանք բոլորը հաստատում են, որ հասարակական արտադրանքի յուրացումը սովորական երեւույթ էր խորհրդային տարիներին, իսկ իրենց բարոյապես արդարացնելու համար ասում են (մեջբերում եմ ինձ հաճախ տրվող պատասխանը). «Եթե կոլխոզի բրիգադիրը մեքենայով էր տանում, ապա մենք ինչու պարկերով չպետք է տանեինք»: Հատկանշական է, որ Սովետի պայմաններում հանրային կարծիքը չի հակադրվում նրան, ով գողացել է, որովհետեւ ըստ էության կոլեկտիվ արտադրության դեպքում բերքը կամ արտադրանքը պատկանում է բոլորին, այլ կերպ՝ ոչ մեկին: Քանի որ սեփականությունը պահպանվում է պետության կողմից, ապա գողացողների համար միակ արգելքը մնում է օրենքի մարդը՝ ոստիկանը, որը կանխում է գողությունը եւ ուժով գյուղացուն քշում է դաշտ՝ հարկադիր աշխատանքի, ինչպես ընդունված էր խորհրդային ժամանակ: Քանի որ բոլորը ապրում են պետության արտադրանքը յուրացնելու հաշվին, իսկ հանրային սեփականության անօրինական յուրացումը դառնում է սովորական եւ համընդհանուր, ապա ոստիկանը վերածվում է բացահայտ թշնամու: Զուգահեռաբար առաջ է գալիս ՄԻ ՄԱՏՆԻՐ սկզբունքը, այսինքն՝ մի մատնիր հանցագործին, իսկ նա, ով մատնում է, նրան ուղղվում է բոլորի կամ հանրության տիրապետող եւ կարծիք թելադրող անդամների պարսավանքը. ոստիկանին դիմած մարդը դառնում է վատը, անբարոյական, նրան հրապարակային արհամարհում են:

Այլ է իրերի վիճակը շուկայական հարաբերություններում, որտեղ գողը կարող է գողանալ միայն որոշակի մեկից, իսկ վերջինս անպայման կընդվզի իր սեփականության յուրացման դեմ, հանրության մնացած անդամները եւս, քանի որ նրանք, դեմ լինելով իրենց սեփականության դեմ ոտնձգություններին, դեմ կլինեն նաեւ ուրիշների սեփականության յուրացումներին: Ուրիշի սեփականությունը յուրացնողին նրանք այլեւս չեն կարող նեյտրալ վերաբերմունք ցույց տալ, չէ որ հիմա խոսքը իրենց անձնական շահի մասին է:

Խորհրդային պայմաններում բացակայում են նաեւ պայմանագրային հարաբերությունները մարդկանց միջեւ, քանի որ տնտեսությունն ամբողջությամբ կառավարվում է վերեւից: Կապիտալիզմի պայմաններում տնտեսվարողներին անհրաժեշտ է պայմանագրային հարաբերությունների ապահովման համար պետության հարկադրանքը, այսինքն՝ տնտեսությունը չի կարող գործել առանց մարդկանց միջեւ տնտեսական հարաբերությունների օրենսդրական կարգավորման եւ հետեւաբար՝ ոստիկանության ու արդարադատության համակարգի: Պայմանագիր կնքող յուրաքանչյուր կողմ պետք է համոզված լինի, որ մյուս կողմը կատարելու է իր ստանձնած պարտավորությունները: Հետեւաբար շուկայական տնտեսությունը կամ կապիտալիզմը հասարակության մեջ ավտոմատ ստեղծում են օրենքի եւ ոստիկանի աշխատանքի նկատմամբ պահանջ, մինչդեռ խորհրդային հասարակարգում մարդկանց եւ օրենքի ու նրա ներկայացուցիչների միջեւ շահերի բախման հետեւանքով առաջ է գալիս անտագոնիզմ եւ թշնամություն: Այս պատճառներով է պայմանավորված ներկայումս այսպես կոչված «գողական» բարոյականության մայրամուտը, ինչը եւս խորհրդային համակարգից մնացած վերապրուկ է:

Մարդը, երիտասարդ տարիներին որոշելով իր համար լավն ու վատը, ձեւավորելով իր աշխարհայացքը, հասուն տարիքում դժվարությամբ է այն փոխում: Ծուռ աճող տնկին կարելի է ուղղել միայն, երբ նոր է սկսում արմատնել գցել: Մեր հասարակությունը արդեն 20 տարի գործում է կապիտալիզմի պայմաններում, սակայն նախկին հասարակությունից ժառանգած մտածողության կաղապարները դեռեւս շարունակում են պահպանվել: Շարքային քաղաքացին ոստիկանին շարունակում է «մենթ» անվանել, թեեւ հոգու խորքում նա տեսնում է ակնհայտ հակասությունը ու օրենքի հանդեպ արհամարհական կեցվածք է ընդունում բացառապես ուրիշների պարսավանքին չենթարկվելու համար: Ծուռ աճած ծառը հազիվ թե կարելի է ուղղել, սակայն չի կարելի թույլ տալ, որ խանգարի նոր տնկիների ուղիղ մեջքին. երիտասարդությունը շարունակում է դաստիարակվել նախկին անհեթեթ նախապաշարմունքներով, օրենքին դիմելը համարվում է գործ տալ, անպատիվ արարք գործել: Պետությունը ու մտավորականությունը այստեղ անելիք ունեն, որովհետեւ ժամանակները փոխվել են, ու 20-րդ դարում չմնալու համար անհրաժեշտ է, որ մարդիկ դառնան օրենքին նվիրված ու օրենքով ապրող:

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Ստուգվում են ոչ բոլոր խաղալիքները

*1-ին էջից*

**Սա խաղալիքներ արտադրող հայկական առաջին ձեռնարկությունն էր, որի արտադրանքը մտավ նաեւ ռուսական շուկա): Սպառողների պաշտպանը, իմ տպավորությամբ, խաղալիքների տեղական արտադրության մասին ըստ պատշաճի տեղեկացված չէր, ավելին՝ երեկ ասուլիսի գալու նրա նպատակն էր հանդես գալ հօգուտ, ինչպես ինքն ասաց, մեծ ու նորմալ խանութների, որտեղ իբր թե վաճառվող ապրանքներն ավելի լավն են, քան փոքր կրպակներում ու տոնավաճառներում դրվածները: Համենայն դեպս, այս խորհրդով սպառողների պաշտպանն առաջին հերթին պաշտպանում էր այդ խանութների սեփականատերերի շահերը:**

**Իսկ մանկաբույժ-ալերգոլոգ Աստղիկ Բաղդասարյանը շեշտեց, որ խոսքը ոչ թե խանութների, այլ բրենդային խաղալիքների մասին է, քանի որ դրանք արտադրող ընկերությունները իբր խստորեն հետեւում են խաղալիքի արտադրության նորմերին:**

**Ըստ բժշկուհու՝ խաղալիք ընտրելիս պետք է առաջնորդվել մի քանի գործոններով՝ հաշվի առնել ապրանքի անվտանգությունը, տարիքին համապատասխանությունը եւ երեխայի առողջական առանձնահատկությունները: Մինչեւ 1 տարեկան երեխաների համար խաղալիք ընտրելիս հարկ է հաշվի առնել, որ այդ տարիքում երեխան խաղալիքը մտցնում է բերանը, հետեւաբար այն պետք է լինի փափուկ, ռետինե եւ զերծ PVC կոչվող նյութից (տուփի վրա պետք է գրված լինի PVC free): Մինչեւ 3 տարեկան երեխաների խաղալիքները չպետք է լինեն մանր մասնիկներով, որպեսզի երեխաները կուլ չտան դրանք: Ընդհանրապես, ամեն խաղալիքի վրա պետք է գրված լինի, թե որ տարիքի համար է նախատեսված:**

**Իսկ ալերգիա ունեցող երեխաների ծնողները անհրաժեշտ է, որ խուսափեն փափուկ խաղալիքներ ընտրելուց, որովհետեւ դրանք հավաքում են փոշու տզեր. «Փափուկ անկողինը, կահույքը նույնպես փոշու կուտակիչներ են եւ սրում են ալերգիաները», ավելացնում է բժշկուհի Բաղդասարյանը: Ի դեպ, վերջինս իր փորձի ընթացքում խաղալիքներից թունավորման դեպքեր չի տեսել, սակայն նշում է, որ ծանր մետաղներից թունավորումները մի օրում չէ, որ ի հայտ են գալիս:**

**Վերջում բանախոսները եկան եզրահանգման՝ խաղալիք ընտրելու պատասխանատվությունը ծնողինն է, իսկ վաճառքի պատասխանատվությունը՝ առաջին հերթին վաճառող ընկերությանը:**

# Երեւան-Ստամբուլ

Ստամբուլ կատարած ուղեւորության արտաքին տպավորությունների վերարտադրումը անիմաստ է, քանզի այդ պատմական քաղաքն այցելելը դյուրին գործ է Հայաստանի քաղաքացիների համար: Ամենաարտառոցը, թերեւս, հայաստանցիների ներկայությունն էր այդ հսկա մեգապոլիսում եւ առհասարակ Թուրքիայում՝ տարբեր աղբյուրներով՝ 30-100 հազար մարդ, պաշտոնական տվյալներ չկան: Թվաքանակն աննշան է նույնիսկ 20-միլիոնանոց քաղաքի համար, էական՝ օրեցօր նոսրացող Հայաստանի համար: Ինչն է բնորոշ ընդհանուր առմամբ պարզ աշխատանքով զբաղված այս մարդկանց համար՝ խոր հիասթափությունը հայրենյաց անարդար իրողություններից, իշխանություններից, հասարակ մարդու նկատմամբ ղեկավարության անողոք անտարբերությունից, ցածրագույն վարձատրությունից: Գուցե անսովոր չէ, երբ հայաստանցին հայտնվում է Փարիզում, Մոսկվայում, Լոս Անջելեսում: Սակայն ուրիշ է, երբ նա ապրուստի որոնումներով ոտք է դնում... Թուրքիա: Եկեք միայն կեղծ պաթետիկայով չմեղադրենք այս մարդկանց հայրենիքի դավաճանության մեջ, ինչը ժամանակ առ ժամանակ հնչում է հայկական լրատվամիջոցներում: Լավ կյանքից չեն հեռանում Հայաստանից: Ստամբուլում բնավորված շատ հայաստանցիների հետ ունեցած զրույցներում ապշեցնում էր նրանց միահամուռությունը մի հարցում՝ թուրքական իշխանությունները, թուրքերը իրենց նկատմամբ անհամեմատ ավելի բարեհաճ են, քան դա նկատվում է Հայաստանում: Այդպես է դա, թե ոչ, թողնենք հայոց կառավարիչների խղճին:

Փոքր-ինչ հակադրություն: Թուրքիայում զգացվում է հարգանքը երկրի ղեկավարության ու մասնավորապես վարչապետ Էրդողանի նկատմամբ: Թաքսիմի իրադարձությունները եւ նույնիսկ Սիրիայի նկատմամբ ագրեսիվ քաղաքականությունը առանձնապես չխախտեցին նրա դիրքերը: Անգամ Էրդողանի հակառակորդները, ընդդիմախոսները ընդունում են նրա կառավարման 10 տարվա ընթացքում երկրի կյանքում տեղի ունեցած հսկայական առաջընթացը: Միայն մեկ փաստ. երբ Էրդողանը եկավ իշխանության գլուխ, տարեկան միջին աշխատավարձը կազմում էր 2000 դոլար: Հիմա հասել է 11000-ի սահմանը: Հայաստանի ո՞ր ղեկավարը կարող է հպարտանալ նման, պարզ է, համեմատական, հաջողությամբ: Եվ առհասարակ, երբ ավտոբուսով մտնում ես Թուրքիա եւ բազմաթիվ քաղաքների ու ավանների միջով հասնում Ստամբուլ, անկարելի է չտեսնել երկրի եվրոպականացման կուրսի ակնառու դրսեւորումները: Վերջիվերջո պետք է տարրական անաչառություն ցուցաբերել մեր հավերժական թշնամու նկատմամբ, նախանձել նրա առաջընթացին, լավ իմանալ, թե ումից ինչ ենք պահանջում եւ այլն:

Աղախին աշխատող ստամբուլաբնակ հայաստանցի կինը ասաց, որ երազում է (այդպես էլ ասաց) դառնալ Թուրքիայի քաղաքացի՝ մոտ 500 դոլարի հասնող ծերության կենսաթոշակ ապահովելու նկատառումով: Որպես համաշխարհային պրովոկացիա կդիտվեր, եթե սոցիոլոգիական հետազոտությունների որեւէ կենտրոն հայտարարեր, թե Թուրքիայի երիտասարդության 75, 8 տոկոսը ձգտում է հեռանալ երկրից:

Հայաստանցիների արտագաղթը Թուրքիա նույնքան արտառոց է նաեւ այն իմաստով, որ բուն պոլսահայերի մեջ այնուամենայնիվ մտահոգություն կա իրենց իսկ ապագայի հանդեպ: Ճիշտ է, Էրդողանը Եվրոպային գոհացնելու նպատակով ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարում է սիրաշահելու քաղաքականություն: Սակայն ոչ մի երաշխիք չկա, որ ռազմատենչ նացիոնալիզմը նորից գլուխ չի բարձրացնի: Ստամբուլում եղած օրերին տեղի հայությանը հուզող խնդիրների կապակցությամբ «Ակօս» թերթում իր խոհերն էր հայտնել Պոլսո պատրիարքարանի միջեկեղեցական հարաբերությունների նախագահ Սահակ սրբազան Մաշալյանը: Թուրքիայի ներքին քաղաքականության ոչ բացառելի անկայունությունների հետ մեկտեղ Մաշալյանը առանձնացնում է մերձավորարեւելյան իրադարձությունների Թուրքիա թափանցելու, թուրք-քրդական պատերազմի հավանականությունը եւ դրանց վտանգավոր հետեւանքները տեղի հայության վրա: Մաշալյանը գտնում է, որ թուրք-հայկական սահմանի բացման դեպքում, ցավոք, «դէպի մեր կողմը բնակչութեան հոսք մը կ՚ապրվի: Եթէ Հայաստան իր խնդիրները բարեկարգէ, սփիւռքի համար նոր ձգողութեան կեդրոն պիտի դառնայ եւ այս անգամ մենք ենք որ կը գաղթենք»:

Ներհամայնքային կյանքում ամենատագնապալին մահացության գերազանցումն է ծննդաբերությանը: Միայն 2012 թվականին 482 թաղման ծիսակատարության դիմաց գրանցվել է սոսկ 236 մկրտություն եւ 191 պսակադրություն: Եվ սա ասես քիչ է, անհավատալի՝ մոտ 30 տոկոսի է հասել խառն ամուսնությունների թիվը «եւ անոնցմէ սերած սերունդին հաւանական կորուստը»: Թեւ դանդաղորեն, բայց շարունակվում է տեղացի հայերի արտահոսքը Ստամբուլից:

«Նոր քաղենի ընկալում մը գոյացավ, նշում է սրբազանը: Նախապէս մանուկը ընտանիք հասկացողութեան հիմնական տարրն էր: Այժմ վերածուած է համեմի մը: Համեմ մը՝ որ անհրաժեշտ չէ, բայց եթէ ըլլայ՝ լաւ կ'ըլլայ: Երբեք պէտք չէ անցնիլ մէկ կամ երկուի սահմանը»:

Մաշալյանը, այնուամենայնիվ, փորձում է լավատես լինել, թեեւ դա նրան հաջողվում է մեծ դժվարությամբ: Զուգահեռ անցկացնելով մյուս հայ գաղթօջախների միջեւ, նա արձանագրում է. «Պոլսահայութեան կարեւորագոյն յատկութիւնը պատմական արմատներն են: Ի վերջոյ մենք 550 տարի է, որ հայրենիքէն պոկուած ենք, իսկ անոնք՝ 100 տարի»:

Ստամբուլում զարմացնում էր նաեւ մի այլ պարագա: Պոլսահայերի մի մասը արդեն, ավաղ, չի խոսում հայերեն, նույնիսկ գերադասում են թուրքական անուններ, թեեւ չեն հրաժարվում ազգային ինքնությունից: Այդ երեւույթը հասկանալու համար երեւի պետք է ապրել-գոյապայքարել այդ յուրօրինակ մուսուլմանական «անծայրածիր» գերքաղաքում:

Եվ վերջինը: Տունդարձին ավտոբուսում երկու պոլսահայ կար: Ամբողջ ճանապարհին ուղեկից հայաստանցիները միաձայն՝ ի գիտություն այս երկու սփյուռքահայերի, իրենց հայրենիքը ներկայացրին որպես աշխարհի գրեթե ամենաանարդարացի երկիրը, իսկ ղեկավարությանը՝ որպես ամենագիշատիչ խավի (երկիրը երկիր չէ): Պոլսահայերը շվարել էին. մի՞թե ամեն ինչ այդքան վատ է: Այդուհանդերձ նրանցից մեկը խիստ հուզվեց, երբ հատելով Հայաստանի սահմանը, նա, ի դեմս մաքսատան ջահել ծառայողի, առաջին անգամ տեսավ իսկական հայի... ոստիկանի մը: «Ոստիկանը», չգիտես ինչու, դրանից վիրավորվեց:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

# Սիրիացի ապստամբների մեջ իշխում են իսլամիստներն ու ծայրահեղականները

*Բրիտանացի վերլուծաբանների զեկույցը*



**Սիրիացի ապստամբների շարքերում առաջատար դեր են խաղում իսլամիստները, ջիհադիստները եւ «Ալ Ղաիդայի» կողմնակիցները: Ընդդիմության զինված ջոկատների կեսը կազմում են կամ «Ալ Ղաիդայի» բացահայտ դաշնակիցները, կամ էլ զանազան ծայրահեղական խմբավորումների ներկայացուցիչները: Սա հերքում է ամերիկացիների այն պնդումները, թե Բաշար Ասադի վարչակարգի դեմ մղվող պայքարը իբր գլխավորում են աշխարհիկ ուժերը, ասվում է բրիտանական IHS Jane's հրատարակչության վերլուծական հետազոտության մեջ:**

**Հետախուզության տվյալների եւ տեղացի ակտիվիստների ու մարտիկների հարցումների վրա հիմնված զեկուցագրի հետեւություններին անդրադառնում է «Դեյլի թելեգրաֆ» թերթը:**

**Փաստաթղթի հեղինակ Չառլզ Լիստերի տվյալներով՝ Սիրիայում կռվում են մոտ 100 հազար ապստամբներ, որոնք բաժանված են շուրջ հազար տարատեսակ խմբերի:**

**Առնվազն 10 հազար «ապստամբներ» իրականում «Ալ Ղաիդայի» հետ կապված խմբավորումների ջիհադիստներ են, ընդ որում նրանց մեջ շատ են օտարերկրացի գրոհայինները: Եվս 30-35 հազարը արմատական իսլամիստներ են, որոնք կիսում են ջիհադիստների հայացքները, բայց ամբողջովին կլանված են ներսիրիական հակամարտությամբ:**

**Մնացյալ մարտիկների 1/3-ը չափավոր իսլամիստներ են, եւ ապստամբների միայն փոքր մասն են կազմում աշխարհիկ ընդդիմության ու ազգայնական խմբերը:**

**Լիստերը նշում է, որ առավել արմատական խմբավորումների մեջ առաջատար դիրքեր են գրավում «Ան Նուսրա ճակատը» եւ «Իրաքի ու Լեւանտի իսլամական պետությունը»: Վերջին մեկ տարում դրանց ազդեցությունը կտրուկ ուժեղացել է: Եթե սիրիացի չափավորական ապստամբների նպատակը Բաշար Ասադի վարչակարգի տապալումն է, որին համարում են բռնապետ, ապա ջիհադիստները ձգտում են երկիրը դարձնել տարածաշրջանի իսլամական «խալիֆայություն»:**

**Հայացքների այդ տարբերությունը հանգեցնում է ընդդիմադիր ուժերի երկպառակություններին: Տեղի են ունենում ներքին զինված բախումներ, իսկ ջիհադիստները նաեւ «զտումներ» են իրականացնում Սիրիայի տարբեր մասերում, օրինակ՝ Հալեպում:**

**Կան տեղեկություններ, որ «Ալ Ղաիդան» մահապատժի է ենթարկել չափավորական «Ազատ սիրիական բանակի» դաշտային հրամանատարներից մի քանիսին: Բացի դրանից, «Ան Նուսրա ճակատը» եւ «Իրաքի ու Լեւանտի իսլամական պետությունը» վերահսկողություն են հաստատել Սիրիայի հյուսիսում պարենի ու վառելիքի մատակարարման ուղիների վրա: Տեղական բնակչությանն ապահովելով՝ գրոհայինները շահում են այդ շրջանների սիրիացիների համակրանքը, ինչին չեն կարողանում հասնել մյուս ապստամբական խմբերը:**

**Այս ամենը խիստ մեծացնում է վտանգը, որ Արեւմուտքի մատակարարած զենքը կհայտնվի հենց ազդեցիկ ջիհադիստների ու ծայրահեղականների ձեռքին, ընդգծում են բրիտանացի փորձագետները: Ի դեպ, անցյալ շաբաթ Սիրիայի ընդդիմադիր եւ հեղափոխական ուժերի Ազգային կոալիցիայի ներկայացուցիչ Խալիդ Սալեհը հայտարարեց, որ ԱՄՆ-ը արդեն սկսել է որոշ զինատեսակներ մատակարարել իր ջոկատներին:**

Պ. Ք.

# Ապաքրեականացման գործողություններ Մոսկվայի մետրոյում եւ շուկաներում

Մոսկվայի մետրոպոլիտենի ապաքրեականացման գործողության շրջանակներում ոստիկանությունը շաբաթավերջին կալանավորել է 3122 անձանց, հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:



Շաբաթ եւ կիրակի օրերին կազմվել է 564 վարչական արձանագրություն, որոնցից 52-ը վերաբերում են ներգաղթի օրենսդրության խախտմանը, 69՝ մանր խուլիգանությանը, 350-ը՝ հասարակական վայրերում ոգելից խմիչքի օգտագործմանը: Հարուցվել է 4 քրեական գործ:

Մետրոյի ապաքրեականացման գործողությունը սկսվել է սեպտեմբերի 14-ին, իսկ թե երբ կավարտվի՝ չի նշվում: Գործողության ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում էթնիկ հանցավորությանը, ընդհատակյա ներգաղթին, կեղծ փաստաթղթերի առեւտրին, թմրանյութերի ու զենքի անօրինական շրջանառությանը:

Ավելի վաղ՝ օգոստոսին, Մոսկվայի ոստիկանությունը համանման գործողություն էր անցկացրել շուկաներում: Առիթը Մասվեեւյան շուկայում ոստիկանի վրա կատարված հարձակումն էր: Ստուգումների ընթացքում զանազան խախտումների համար պատասխանատվության էր ենթարկվել 3,2 հազար մարդ: Մոսկվայի ՆԳՆ գլխավոր վարչության տվյալներով, 2013 թ. օգոստոսին շուկաներում հանցագործությունների մակարդակը 2012-ի օգոստոսի համեմատությամբ նվազել է 40 տոկոսով:

ՀԱՄԵՐԳ

# Սերգեյ Խաչատրյանի եւ ՀՊԵՆ համերգը՝ հոտընկայս ծափահարությունների ներքո

Օրերս Արամ Խաչատրյանի անվան միջազգային փառատոնի շրջանակներում, կայացավ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի եւ բազմաթիվ միջազգային մրցույթների հաղթող, ջութակահար Սերգեյ Խաչատրյանի համերգը, որը նվիրված էր մեծ կոմպոզիտորի 110-ամյա հոբելյանին:

Առաջին անգամ նվագախումբը կատարեց Արամ Խաչատրյանի Հանդիսավոր պոեմը, իսկ Սերգեյ Խաչատրյանի կատարմամբ հնչեց նրա Ջութակի կոնցերտը: Հանդիսատեսը մեծ ոգեւորությամբ ընդունեց կատարումները եւ հոտընկայս ծափահարություններով՝ որոնց ընդառաջ Սերգեյ Խաչատրյանը ներկաներին նվիրեց երկու սոլո կատարում:

Համերգից հետո Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը կարեւորեց այն հանգամանքը, որ աշխարհում մեծ ճանաչում ունեցող հայ երաժիշտները, որոնք հանդես են գալիս լավագույն նվագախմբերի հետ, գալիս են Հայաստան եւ ելույթ ունենում հայրենիքում:

Թավջութակահար Նարեկ Հախնազարյանին եւս շատ դուր էր եկել համերգը. «Ուղղակի ամեն ինչ փայլուն էր: Սերգեյ Խաչատրյանն իրավամբ այսօր աշխարհի լավագույն ջութակահարներից է»:

Համերգից հետո Սերգեյ Խաչատրյանը պատասխանելով լրագրողների հարցերին, նշեց, որ առանց երաժշտության ապրել չի կարող. «Երաժշտությունն ինձ համար այն աշխարհն է, որտեղ կարող ես ապրել այնպիսի մաքուր զգացմունքներ, որոնք այլ տեղ դժվար թե գտնես: Եվ ինչքան խորն ես ապրում երաժշտությունն ու այդ մաքուր զգացմունքները, այնքան քիչ ես ուզում վերադառնալ այս աշխարհ: Երաժշտությամբ կարողանում ես մաքրել հոգիդ: Ինձ համար երաժշտությունից մաքուր երեւույթ չկա»:

Սերգեյ Խաչատրյանը, խոսելով իր հայաստանյան ելույթների մասին, ասաց. «Սեփական ժողովրդի համար նվագելը յուրահատուկ մի զգացողություն է, որն ուրիշ բեմերում զգալ հնարավոր չէ: Երբ Հայաստանում բարձրանում եմ բեմ, գիտեմ, որ իմ ժողովրդի համար եմ նվագում: Արամ Խաչատրյանի ստեղծագործություններում ազգային, ժողովրդական տարրերն ակնհայտ են, ինչը նրա երաժշտությունը դարձնում է շատ առանձնահատուկ: Ես փորձում եմ Ջութակի կոնցերտում հայկական ժողովրդական տարրն ավելի ընդգծված ներկայացնել ու այդ մոտիվներն ավելի վառ ցույց տալ»:

Երաժիշտն ընդգծեց, որ սովորել է տարբեր ուսուցիչների մոտ, սակայն իր երաժշտությունը հայկական է. «Ես Հայաստանում ունեմ իմ սիրած վայրերը Սաղմոսավանք, Տաթեւ, լինելով այդտեղ ես զգում եմ, որ դա իմ հողն է: Չեմ կարող բացատրել, թե ինչու է այդպես, դա իմ մեջ է»:

Նշենք, որ Սերգեյ Խաչատրյանը նվագում է 1740թ.-ի Ջ.Գվարներիի «Իզայի» ջութակը, որը նրան տրամադրել է ճապոնական երաժշտական Nippon հիմնադրամը:

Միջազգային փառատոնի շրջանակներում ՀՊԵՆ-ի հաջորդ համերգը հոկտեմբերի 5-ին է, որի ժամանակ նվագախմբի հետ ելույթ կունենա աշխարհահռչակ հոբոյահար Ալեքսեյ Օգրինչուկը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Դասական երաժշտություն + էթնո ջազ

Սեպտեմբերի 18-ին, Ա.Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը ներկայացնում է՝ «Օրկեստրա պլյուս» նախագիծը, որի շրջանակներում տեղի կունենա համերգ շվեյցարական «Վալերի Տոլստով» խմբի երաժիշտների կատարմամբ: Համերգի ընթացքում կզուգորդվի դասական երաժշտությունը էթնո ջազի հետ:

Շվեյցարական«Վալերի Տոլստով» խմբի կազմում ներգրավված են երաժիշտներ, որոնք շրջագայել են ամբողջ աշխարհը եւ հանդես եկել հեղինակավոր դահլիճներում:

Խմբի ստեղծման գաղափարը պատկանում է Վալերի Տոլստովին՝շվեյցարական մուլտիգործիքավորող, կոմպոզիտոր, որը ազգությամբ 90 տոկոսով հայ է: Վալերին նվագում է բազմաթիվ էթնիկ գործիքների վրա, բացի այդ, ճանաչված դաշնակահար Տիգրան Ամասյանի եւ հարվածային Stewart Copland-ի (The Police/Sting) հետ միասին Տոլստովը դարձավ «System of A Down » խմբի երգիչ Սերժ Թանկյանի նոր նախագծի մասնակից:

Համերգներում Authentic Light Orchestra-ի օգտագործվող գործիքների քանակը հիշեցնում է նվագախմբի: Վերջին 2-3 տարվա ընթացքում նվագախումբը հավաքել է տարբեր ազգությունների տաղանդավոր երաժիշտների, որոնք մասնագիտացված են երաժշտական տարբեր ժանրերում: Խմբի անդամներից, վոկալիստ Վերոնիկա Ստալդերը կատարում է հայերեն, սակայն չի հասկանում լեզուն: Վերոնիկան նվագախմբի հետ փորձից շատ գոհ էր: Ի դեպ, չհասկանալով լեզուն Հայաստանում՝ փորձի ժամանակ երգելով հայերեն, ակամայից սկսել է լաց լինել. «Հայոց լեզուն ինձ համար շատ գեղեցիկ եւ երգեցիկ լեզու է: Շատ տարբեր զգացողություններ է առաջանում, երբ երգում ես հայերեն Շվեյցարիայում, Ռուսաստանում եւ Հայաստանում»:

ՀՀ վաստակավոր արտիստ, երաժշտական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Կարեն Դուրգարյանի մեկնաբանությամբ, ծրագրի նպատակն է երիտասարդների շրջանում տարածել դասական երաժշտությունը՝ հետաքրքրական լուծումներով. «Ընդհանրապես երիտասարդները մտածում են, որ եթե դասական երաժշտություն է, ապա դա կլինի ծանր իրենց համար եւ դժվարամարս, արդյունքում խուսափում են գալ համերգներին: Նման նախաձեռնություններով փորձում ենք երկխոսության մեջ մտնել երիտասարդների հետ»:

Մ. Հ.

# Մտասեւեռումներ՝ մոխրագույնի շերտերում

Ցուցասրահի մեղմ մոխրագույնը աչք է շոյում, միջին չափսի կտավների ողորկ մակերեսների թափանցիկ մթնոլորտը մոխրագույնի մեջ առկայծող նուրբ արծաթավուն խորքով, ստեղծում է արտակարգ հանգստացնող տրամադրություն: Գեղանկարիչ Միհր Մանսուրյանը ավելի քան 30 տարի ապրում է Փարիզում՝ բնականաբար ստեղծագործական դժվարին սկզբով, եւ հետագա զարգացումներն ու վարպետությունն արդեն պարտ են տարիների ամենօրյա տեւական աշխատանքին: Ապրել է արվեստի փորձառության տարբեր շրջաններ, անցել գեղագիտական մտածողության տարբեր փուլերով՝ ոճի, տեխնիկայի, գույնի, կատարման:



«Սկիզբը դժվար էր: Որոնումների, նոր իրականության բազմազանության՝ խենթության մի շրջան, բայց սկսեցի աստիճանաբար հանդարտվել, ներքաշվել սեփական ես-ի մեջ, իմ կաղապարի մեջ, այսինքն՝ դուրս փակեցի եւ սկսեցի աշխատել»,- ցուցադրությունները եղան թեյի, սուրճի սրահներից մինչեւ պատկերասրահներ: «Մենակ դժվար էր, բայց հաճելի»,- ժպտում է:

Միհր Մանսուրյանի կտավները, որոնք ներկայացված են «Ակադեմիա» պատկերասրահում, նկարչական մտածողության որոշակի շրջանի արտահայտություններ են, առարկայական պատկերավորման նկարչական վարպետության կատարյալ դրսեւորումներ: Առարկան, սակայն, գեղագիտական արժեք ստանալուց բացի, այստեղ նաեւ միջոց է մտածողական, զգացական շերտեր ի հայտ բերելու:

Այսպես՝ գավաթի ապակու՝ գրեթե աներեւույթ դարձած թափանցիկությունը եւ դրա զարմանալի ձեւագծերի նրբությունը կտավի մոխրագույնին, խոսում է մաքրության, մաքրագործման անհրաժեշտության եւ կամ՝ առարկայական աշխարհի ընկալման անհավակնոտ սիրո մասին: Նույնատոն ֆոնին մի քանի կտավներում մայր ճյուղից պոկված, օդն ի կախ անհայտ մի տերեւ հիշողության ապրում է կրում (այն կապված է 1915-ի հետ). այս ամենը քնարական մեղմ տրամադրությունների, մտքերի հոսք ու մտասեւեռում է առաջացնում: Կտավների մոնոխրոմային վիճակները ներքին հանդարտության հետ փոխանցում են զգացական ընդհանուր ամբողջական մի վիճակ, որտեղ, իհարկե, առարկայական, ֆիգուրատիվ օբյեկտը հայացքիդ կենտրոնում է հայտնվում, մտապահվում բավական երկար, սակայն գլխավոր գործող «անձը», այնուամենայնիվ, մոխրագույնն է մնում:

Նկարչի նախկին աշխատանքներից գունային ավելի ակտիվ տպավորություններ են մնացել: Ներկապնակի այս փոփոխությունը որքան անսպասելի, նույնքան հաճույք պատճառող է:

«Երեւանի Ժամանակակից արվեստի թանգարանում ցուցադրվելու շրջանում, հարում էի ֆովիզմին, որին հնչեղ գունայնությունն է բնորոշ, ինձ համար վարպետ էր Սարյանը, վարպետ էր Մինասը: Այն ժամանակ սովոր էինք, որ հայկական գույները դրանք են: Հետո Հակոբ Հակոբյանը եկավ եւ բերեց գույնի իր աշխարհը, պարզվեց դա էլ է հայկական:

... Իմ կտավներում կրակը փոխվեց մոխրի: Մոխիրն իր մեջ պարունակում է շատ գույներ, որ մեծ արժեք ունի, ուզում եմ վրձինը այնպես խփել, որ գույնը հնչի իր ողջ հմայքով ու գեղեցկությամբ»: Նկարչի վրձինը, անկասկած, սա իրականացրել է, նրա կտավներում մոխրագույնը հնչում է երաժշտական հարմոնիկ, ամենահաճելի տոնայնությամբ, որի ֆոնին յուրաքանչյուր իր, յուրաքանչյուր պատկեր գունային գամմայի տրամադրությանը համահունչ ներկայացված է ինքն իրենով ամբողջական: Սա հաջողվել է նկարչին, քանի որ նա դավանում է արվեստի ճշմարիտ, չհնացող արժեքներին, նկարչության էսթետիկայի սկզբունքներին, կատարման վարպետությանը, դասական իմաստով նկարի վեհությանը, նաեւ, իհարկե, զգացականությանը:

Ցուցահանդեսի բացման ելույթը Երվանդ Տեր-Խաչատրյանինն էր: Ավարտին նրա հետ առանձնազրույցը ներկայացվում է ստորեւ.

«Միհր Մանսուրյանը 60-ականների վերջերից մեր կերպարվեստի աշխարհում էր արդեն, այդ արվեստի, մշակույթի վերելքի տարիների ազդեցությունը կրում էր անշուշտ, եւ այդ ալիքի ավելի երիտասարդ սերնդի մարդկանցից մեկն էր: Ամբողջ կյանքում նա հավատարիմ մնաց նկարչության առարկայական բովանդակությանը: Չգնաց գավառական մոդեռնիզմի ճանապարհով, ինչը, ի վերջո, մեր նկարչությունը բերեց փակուղի: Միհր Մանսուրյանը իր մտածողությամբ արդիական նկարիչ էր: Կարելի է տեսնել, իհարկե, նրա կապը դասական նկարչության հետ: Նատյուրմորտը հնագույն ժանրերից մեկն է, եւ դժվար բան է նոր ժամանակներում ընտրել այդ ժանրը եւ կարողանալ անհատականություն, յուրօրինակ հայացք ցուցաբերել նատյուրմորտի հանդեպ:

Միհր Մանսուրյանը ստեղծել է հրաշալի նատյուրմորտներ, որոնց բովանդակությունը կարող է թվալ միօրինակ, բայց դա թվացյալ միօրինակություն է, բազմազանությունը խորքի մեջ է, մեկնաբանության մեջ է: Նկարիչը ընտրում է նույն առարկաները, բայց դրանք տարբեր մթնոլորտի մեջ են պատկերված, տարբեր հարաբերությունների մեջ, տարբեր տեսողականության մեջ, եւ ուշադիր եթե նայես՝ դրանք տարբեր են միմյանցից իրենց տոնայնությամբ, առարկաների կատարման եղանակով: Այդ կտավները թվում են նկարչական ներսուզումների, նկարչական մեդիտացիաների արտահայտություններ:

Թվում է՝ նկարիչը կենտրոնանում է մեկ-երկու առարկա պատկերելու վրա, բայց կարողանում է ամենալակոնիկ միջոցներով, պարզ իրերը պատկերելու միջոցով խոսել կյանքի էության մասին, կյանքի գեղեցկության, խորհրդավորության մասին, իրերի այնկողմնային հմայքի մասին, այն ամենի մասին, ինչը իրերի աշխարհը կապում է մարդու հետ, որովհետեւ, ի վերջո, իրերը կրում են ոչ միայն մարդու գործունեության, ձեռքերի հետքերը, այլեւ նրա հոգեկան նկարագրի դրոշմը:

Մարդու հարաբերությունները իրերի աշխարհի հետ բացահայտում են մարդու վերաբերմունքը կյանքի եւ իրականության հանդեպ: Այս առումով Միհր Մանսուրյանի նատյուրմորտները պատկերված են յուրօրինակ խորհրդավոր լույսի ներքո, անսովոր տարածության մեջ: Դասական նատյուրմորտները, որոնք առարկաների պատկերման առումով բացառիկ ու կատարյալ են, պատկերում էին դրանք թանգարանային մթնոլորտում, որոնք կիսախավարում էին երեւում, ոչ ամբողջությամբ, բայց նկարիչը կարողանում էր ամբողջական պատկերացում տալ, եւ դրանով կարողանում էր խոսել տիեզերքի մասին, իր աշխարհազգացողության մասին: Ժամանակակից մարդն էլ եթե կարողանում է նատյուրմորտ նկարել, նույնպես կարող է արտահայտել իր տպավորությունները: Ասածս պարադոքս թող չթվա: Նկարիչը պետք է կարողանա նկարել: Ինչպե՞ս է նկարում Միհր Մանսուրյանը. վարպետությամբ, ունի անվրեպ ձեռք, շատ հետաքրքրական տեսողություն, երբեմն նույնիսկ խաղում է վարպետությամբ՝ թե ինչ նրբությամբ կարող է պատկերել առարկան: Գավաթի, սկահակի, ափսեի եզրի շողացող մի փոքրիկ կետը, երբ առարկայի ամբողջ ծավալը ի հայտ է բերում, առարկան լուսավորում է մի այլ կերպ, եւ մենք մտնում ենք նկարչի այդ գրավիչ եւ հեքիաթային աշխարհը: Անշուշտ, Միհր Մանսուրյանը տաղանդավոր մարդ է, սա հրաշալի նկարչություն է, վստահ եմ, որ այս գեղեցիկ արվեստը այսօրվա մեր նկարչական աշխարհի կարեւորագույն երեւույթներից մեկն է: Նկարիչը հասել է մի վարպետության, որը նրան պատիվ է բերում եւ պատիվ է բերում մեր արվեստին: Հրաշալի է, որ այսպիսի տաղանդավոր արվեստագետ այսօր ապրում եւ գործում է մեր մեջ»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Գոլային հրավառություն Կատանում

Որոշ ընդմիջումից հետո, որի ընթացքում Հայաստանի ազգային հավաքականը ընտրական 2 հանդիպում անցկացրեց Չեխիայի եւ Դանիայի ընտրանիների հետ, վերսկսվեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունը: 5-րդ տուրն աչքի ընկավ գոլերի առատությամբ: Խփվեց ընթացիկ առաջնության համար ռեկորդային՝ 19 գոլ: Դրանցից 11-ը գրանցվեց Կապանում, որտեղ «Գանձասարը» 9-2 հաշվով պարզապես ջախջախեց բարձրագույն խմբի նորեկ Մարտունու «Ալաշկերտին»: Առաջին խաղակեսում հյուրերը քիչ թե շատ դիմադրեցին մրցակցին՝ հանգստի գնալով 1-3 հաշվով: Իսկ ընդմիջումից հետո գնդակները հյուրերի դարպասում հայտնվեցին ինչպես առատության եղջյուրից: Կապանցիներից արդյունավետ խաղով աչքի ընկավ Նարեկ Բեգլարյանը՝ դառնալով ընթացիկ առաջնությունում գրանցված առաջին հեթ տրիկի հեղինակ: Գոլերից մեկը նա խփեց 11 մ հարվածով: Մեկական անգամ մրցակցի դարպասը գրավեցին Սամվել Մելքոնյանը, Շոթա Զիֆիան, Գորան Օբրադովիչը, Արթուր Բարսեղյանը, Արարատ Առաքելյանն ու Արտակ Դաշյանը: «Ալաշկերտից» գոլերի հեղինակներ դարձան Միհրան Մանասյանը (11 մ) եւ Վարդան Պետրոսյանը:



«Գանձասարը» ՀՀ առաջնություններում իր ամենախոշոր հաշվով հաղթանակը տոնեց: Մինչ այդ թիմի համար ամենախոշորը 2011-ին «Արարատի» նկատմամբ 5-0 հաշվով տարած հաղթանակն էր:

Հարկ է նշել, որ վերջին անգամ առաջնությունում մեկ խաղում 10 եւ ավելի գոլ էր գրանցվել 2006-ին, երբ «Փյունիկը» 12-1 հաշվով ջախջախել էր «Կիլիկիային»: Իսկ ամենախոշոր հաշիվը գրանցվել է 1992-ին «Արարատ»-«Աղթամար» խաղում՝ 18-0: Այդ գոլերից 8-ի հեղինակն արարատցի Վահե Յաղմուրյանն էր, որի ցուցանիշը մինչ օրս ոչ մեկին չի հաջողվել նույնիսկ կրկնել:

Ի տարբերություն Կապանի, Երեւանում կայացած «Միկա»-«Բանանց» խաղում ֆուտբոլասերները այդպես էլ գոլի ականատես չդարձան:

Գոլառատ էր նաեւ «Փյունիկ»-«Ուլիս» հանդիպումը: Թվում էր, թե առաջնության առաջատարներից մեկը՝ փյունիկցիները հեշտությամբ կհաղթեն հետնապահին, սակայն մեծ դժվարությամբ խուսափեցին պարտությունից: Ճիշտ է, առաջինը հաջողության հասավ «Փյունիկը», որի կազմում աչքի ընկավ պաշտպան Վարազդատ Հարոյանը: Սակայն մինչեւ ընդմիջման գնալը Արտավազդ Բոյաջյանն ու Վիգեն Ավետիսյանն առաջ մղեցին «Ուլիսին»: Ընդմիջումից անմիջապես հետո Արտավազդ Բոյաջյանը 3-րդ անգամ գրավեց «Փյունիկի» դարպասը: Վերջինիս մեծ ջանքերի գնով հաջողվեց խուսափել պարտությունից: Նախ Դավիթ Ջաքարյանը կրճատեց հաշիվը, ապա խաղավերջում թիմի ավագ Դավիթ Մանոյանը հստակ իրացրեց 11 մ հարվածը՝ 3-3:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Գյումրիում «Շիրակի» եւ «Արարատի» մրցավեճը: 2 թիմերն էլ հաջող են հանդես գալիս ու հաղթանակի դեպքում կարող էին գլխավորել աղյուսակը: Առաջին խաղակեսի ավարտին հաշիվը բացեց արարատցի Գեւորգ Նռանյանը: 2-րդ խաղակեսի սկզբում Անդրանիկ Բարիկյանը վերականգնեց հավասարակշռությունը: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 5 | 2 | 3 | 0 | 12-9 | 9 |
| 2. Միկա | 5 | 2 | 3 | 0 | 5-3 | 9 |
| 3. Շիրակ | 5 | 2 | 2 | 1 | 9-6 | 8 |
| 4. Արարատ | 5 | 2 | 2 | 1 | 5-4 | 8 |
| 5. Գանձասար | 5 | 2 | 1 | 2 | 17-11 | 7 |
| 6. Բանանց | 5 | 1 | 3 | 1 | 5-5 | 6 |
| 7. Ուլիս | 5 | 0 | 2 | 3 | 5-10 | 2 |
| 8. Ալաշկերտ | 5 | 0 | 2 | 3 | 6-16 | 2 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Արտակ Դաշյան | «Գանձասար» | 6 |
| Նարեկ Բեգլարյան | «Գանձասար» | 4 |
| Սերժ Դեբլե | «Շիրակ» | 3 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 3 |
| Դավիթ Մանոյան | «Փյունիկ» | 3 |

# Դավիթ Սաֆարյանը հաջող է մեկնարկել

**Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում մեկնարկել է ըմբշամարտի աշխարհի մեծահասակների հերթական առաջնությունը: Առաջինը մրցումների պարգեւներն են վիճարկում ազատ ոճի ըմբիշները: Հայաստանն աշխարհի առաջնությանը ներկայացել է 6 ըմբիշով: Մեր երկիրը պատվիրակ չունի միայն գերծանրքաշային կարգում:**

**Երեկ Հայաստանից մրցագոտի դուրս եկած հայ 3 ըմբիշներից հաղթանակով մեկնարկեց միայն Եվրոպայի չեմպիոն Դավիթ Սաֆարյանը (66 կգ): Նա 1/16 եզրափակիչում պարտության մատնեց ռումինացի Գեորգի Բուկուրին, իսկ հաջորդ գոտեմարտում հաղթեց լեհ Ռաֆալ Ստասկեւիչին: Մինչեւ 55 կգ քաշային կարգում Միհրան Ջաբուրյանը 2-6 հաշվով պարտվեց վրացի Գեորգի Էդիշերաշվիլիին, իսկ Էդգար Ենոքյանը (96 կգ) զիջեց ալբանացի Էգզոն Շալային:**



# Հայերից լավագույնը Վահե Բաղդասարյանի արդյունքն է

**Թուրքիայում մեկնարկած մինչեւ 20 տարեկան շախմատիստների աշխարհի առաջնությունում Հայաստանը ներկայացնում են Վահե Բաղդասարյանը, Սամվել Տեր-Սահակյանն ու Մարիա Գեւորգյանը:**

**Տղամարդկանց մրցաշարում առայժմ ավելի հաջող է հանդես գալիս Վահե Բաղդասարյանը, որը 3 տուրից հետո վաստակած 2,5 միավորով 117 մասնակիցների մեջ ընթանում է 20-րդ տեղում: Վահեն մրցաշարը սկսեց Քրեյգ Բորնհեյմի հետ ոչ-ոքիով, ապա հաղթանակներ տարավ Ֆիրման Ֆարիդի եւ թուրք Կոկսալ Յուկսելի նկատմամբ:**

**Սամվել Տեր-Սահակյանը վաստակած 1 միավորով 93-րդ տեղում է: Նա առաջնության մեկնարկային տուրում պարտվեց Ալի Մուհամադին, ապա հաղթեց Հուսեյն Մեֆսանիին: 3-րդ տուրում հայ շախմատիստը 2-րդ պարտությունը կրեց Յան Ֆանգի հետ պարտիայում:**

**3-ական միավորով աղյուսակը գլխավորում են Թուրքիան ներկայացնող Ալեքսանդր Իպատովը, լեհ Կրժիժտոֆ Դուդան, չինացի Յու Յանգյին եւ Արաբական Միացյալ Էմիրությունների ներկայացուցիչ Սալեհ Սալեմը:**

**Կանանց մրցաշարում Մարիա Գեւորգյանը 3 տուրից հետո ունի 1,5 միավոր: Մարիան հաղթանակով մեկնարկեց՝ առավելության հասնելով թուրք Բուսրա Սոյդանի նկատմամբ: 2-րդ տուրում մեր շախմատիստուհին զիջեց Ինդոնեզիայի ներկայացուցիչ Մոնիկա Սիհիթեին, իսկ հաջորդ պարտիայում հաշտություն կնքեց հնդիկ Շեքի Շրիշտիի հետ:**



# Սարգսյանը հաղթող ճանաչվեց 1-ին խաղատախտակի վրա

**Գաբրիել Սարգսյանը իսպանական «Էքստրեմադուրա» թիմի կազմում վստահ ելույթներ ունեցավ այդ երկրի թիմային առաջնությունում՝ առաջին խաղատախտակի վրա անցկացրած 7 պարտիաներում վաստակելով 4 միավոր, մնալով անպարտելի: Մյուս թիմերի առաջին խաղատախտակների վրա հանդես եկած շախմատիստներից 4 միավոր էր վաստակել միայն Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը նվաճած «Սեստաոյի» առաջատար, կուբացի գրոսմայստեր Պետրես Դոմինգուեսը, որը սակայն մեկ պարտիայում պարտվել էր: Այնպես որ Գաբրիել Սարգսյանի արդյունքը լավագույնն է: Նա գերազանցեց նաեւ մյուս թիմերի առաջատարներին՝ Դիտեր Նիսիպեանուին (Ռումինիա), Էթիեն Բաքրոյին (Ֆրանսիա), Դավիթ Նավարային (Չեխիա), Լազարո Բատիստա Բրուզոնին (Կուբա), Քեւին Սպրագետին (Կանադա) ու Դավիթ Անտոնին (Իսպանիա):**



**Վերջին 2 տուրերում Գաբրիել Սարգսյանը հաշտություն կնքեց Նիսիպեանուի եւ Նավարայի հետ: «Էքստրեմադուրան» 8 թիմերի մրցավեճում վաստակած նույնքան միավորով գրավեց 4-րդ տեղը: Երկրի չեմպիոն հռչակված «Սեստաոն» վաստակեց թիմային 11 միավոր եւ բոլոր պարտիաներում վաստակած միավորների քանակով (27,5) գերազանցեց նույնպիսի արդյունք ունեցող «Սոլվային» (26,5): 9 միավորով 3-րդ տեղը զբաղեցրեց «Գրոս Խակե Տալդեան»:**

# Կարեն Գրիգորյանն արժանացավ գլխավոր մրցանակին

**Մարտունիում վերջնագիծը հատեց շախմատի «Սեւանա լիճ-2013» մրցաշարը, որի հաղթող ճանաչվեց գրոսմայստեր Կարեն Գրիգորյանը: Ավարտական տուրից առաջ Գրիգորյանը եւ Յուրի Կուզուբովը 5,5-ական միավորով գլխավորում էին աղյուսակը: 9-րդ տուրում առաջինն իր մրցավեճն ավարտեց ուկրաինացի գրոսմայստերը՝ ոչ-ոքի խաղալով բելառուս Սերգեյ Ժիգալկոյի հետ: Իսկ Գրիգորյանը երկարատեւ պայքարից հետո 86-րդ քայլին պարտության մատնեց ավստրիացի Մարկուս Ռագգերին ու վաստակեց 6,5 միավոր: 6 միավորով 2-րդ տեղը գրավեց Յուրի Կուզուբովը: 3-րդ մրցանակակիր դարձավ Սերգեյ Ժիգալկոն: 5 միավորով 4-րդ տեղը զբաղեցրեց Արման Փաշիկյանը, որը հաշտություն կնքեց Իվան Պոպովի հետ:**

# Արոնյանը 3-րդն է Սենթ Լուիսում

**Լեւոն Արոնյանը հաջող հանդես չեկավ ԱՄՆ-ի Սենթ Լուիս քաղաքում ավարտված շախմատի մրցաշարում: Հայ գրոսմայստերը 3 շախմատիստների հետ մրցավեճում 6 հնարավորից վաստակած 2,5 միավորով գրավեց 3-րդ տեղը՝ արժանանալով 30 հազար դոլար պարգեւավճարի:**

**4-րդ տուրում Արոնյանը վերջապես ճաշակեց հաղթանակի քաղցրությունը՝ պարտության մատնելով Հիկարու Նակամուրային: Հաջորդ տուրում Լեւոնը հաշտություն կնքեց Գատա Կամսկու հետ: Մրցաշարի ավարտական տուրում վճռորոշ նշանակություն ուներ Մագնուս Կառլսենի եւ Լեւոն Արոնյանի մրցավեճը: Կառլսենը մեկ միավորով գերազանցում էր Արոնյանին՝ միանձնյա գլխավորելով աղյուսակը: Այդ պարտիայում հաղթեց նորվեգացի գրոսմայստերը, որն էլ 4,5 միավորով դարձավ մրցաշարի հաղթող: Կառլսենը պարգեւատրվեց 70 հազար դոլարով: 2-րդ տեղը 3,5 միավորով գրավեց Հիկարու Նակամուրան՝ որպես պարգեւ ստանալով 50 հազար դոլար: Աղյուսակը 1,5 միավորով եզրափակած Գատա Կամսկին 20 հազար դոլար վաստակեց:**

# Մխիթարյանն իր ներդրումն ունեցավ «Բորուսիայի» նվաճման մեջ

**Հենրիխ Մխիթարյանը Դորտմունդի «Բորուսիայի» կազմում բունդեսլիգայում իր 3-րդ գոլը խփեց՝ աչքի ընկնելով «Համբուրգի» հետ խաղում: «Բորուսիան» խոշոր՝ 6-2 հաշվով հաղթանակ տոնեց եւ 15 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: Թիմի պատմության մեջ դա ռեկորդային ցուցանիշ է: 2-րդ տեղում ընթացող «Բավարիան» 13 միավոր է վաստակել:**

**Գերմանական Spox.com կայքը Մխիթարյանին ընդգրկել է տուրի խորհրդանշական հավաքականում:**

# Մովսիսյանի հաղթական գոլը

**Ֆուտբոլի ՌԴ առաջնության 8-րդ տուրում «Վոլգայի» դարպասը Յուրա Մովսիսյանի խփած միակ գոլը 1-0 հաշվով հաղթանակ պարգեւեց «Սպարտակին»: Մովսիսյանն ընթացիկ առաջնությունում 4-րդ գոլը խփեց: Առաջնության լավագույն ռմբարկուների ցուցակը 7 գնդակով գլխավորում է «Ռոստովի» հարձակվող Արտյոմ Ձյուբան: 6 գնդակ է խփել Դանին («Զենիթ»), 5-ական գոլի հեղինակ են դարձել Վանդերսոնը («Կրասնոդար») եւ Ահմեդ Մուսան (ԲԿՄԱ): Արաս Օզբիլիսը մինչեւ «Սպարտակ» տեղափոխվելը «Կուբանում» 3 գոլ է խփել:**

**«Սպարտակը» 8 տուրից հետո 17 միավորով ընթանում է 3-րդ տեղում: Նույնքան միավոր ունի 2-րդ տեղում ընթացող «Զենիթը», իսկ առաջատարը ԲԿՄԱ-ն է՝ 20 միավոր:**

# Հոու Յիֆանը շահում է մրցախաղը

**Շախմատային թագի հավակնորդուհի Հոու Յիֆանը 3-1 հաշվով շահում է մրցամարտն աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Աննա Ուշենինայի հետ մրցավեճում: 3-րդ պարտիայում չինացի շախմատիստուհին 2-րդ հաղթանակը տոնեց, իսկ հաջորդ պարտիան ավարտվեց ոչ-ոքի:**

**Երեկ մրցակցուհիները հանգստանում էին, իսկ այսօր կկայանա 5-րդ տուրը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Դետրոյթի «Ալեք Մանուկյան» թանգարանի գանձերին նվիրված`

**«Հայկական գանձերի ժառանգություն. վկայություն մի ժողովրդի»**

անգլերեն ալբոմի

Տեղի կունենա սեպտեմբերի 19-ին, ժամը 15:00-ին, Ազգային պատկերասրահի Ոմնանկարների սրահում: Թանգարանի եւ ալբոմի մասին կխոսեն`

ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյան**
Ազգային պատկերասրահի տնօրեն **Փարավոն Միրզոյան**
Արվեստաբան **Լեւոն Չուգասզյան**
Գիրք-ալբոմի գլխավոր խմբագիր **Երվանդ Ազատյան (ԱՄՆ)**

*Հրավիրում ենք բոլոր արվեստագետներին ու արվեստասերներին:*

**Հայաստանի նկարիչների միությունը հրավիրում է**

## Խաչիկ Հարությունյանի

ստեղծագործությունների հոբելյանական ցուցահանդեսին:

Բացումը տեղի կունենա 2013 թ. սեպտեմբերի 25-ին, ժամը 16:00-ին, Նկարիչների միության ցուցասրահում (2-րդ հարկ) Ցուցահանդեսը բաց է սեպտեմբերի 25-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը

**Հասցե` Երեւան, Աբովյան 16**
**Հեռ.` (+374 10) 56 48 53**

## Կորել է

Վալերի Միշայի Միրզոյանի Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջի ապրանքագիտության ֆակուլտետի դիպլոմը` տրված 2009 թ. N 934, AK 059219 համարը անվավեր

www.azg.am

## «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ եւ**
**Անկախ աուդիտորական եզրակացություն**
**«Ռումավա» ՍՊԸ**
**Սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերություն**
**31 դեկտեմբերի 2012 թ.**

*Պռոշյան 2/1, Երեւան 0019, Հայաստանի Հանրապետություն*
*Լիցենզիա/License N ԱԾ/ATS 072*
*իրավ. հասցե` Գր. Արծրունու 78/3 շ., բն. 47 Հեռ/Tel: (374 10) 229 238*

### Անկախ աուդիտորական եզրակացություն

***«Ռումավա» ՍՊԸ-ի մասնակիցներին,***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ռումավա» ՍՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

***Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն***

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է` խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

***Աուդիտի պատասխանատվություն***

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում` ֆինանսական հաշվետվությունների` էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետեւանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը` տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ` ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Կարծիք***

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության` 2012 թ., դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը` համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

***04 սեպտեմբերի, 2013 թ.***

***Անիկ Մարտիրոսյան*** — ***Տնօրեն-բաժնետեր***
***Աննա Գրիգորյան*** — ***Աուդիտոր-բաժնետեր***

#### Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Ակտիվներ | | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 483 | 782 | 7,163 |
| Ներդրումային գույք | 5 | 625,324 | 633,055 | 586,679 |
| Տրամադրված փոխառություններ | 6 | 1,113,951 | 1,125,461 | - |
| | | 1,739,758 | 1,759,298 | 593,842 |
| Ընթացիկ ակտիվներ | | | | |
| Պաշարներ | 7 | - | 100,740 | 101,087 |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | 8 | 17,466 | 25,115 | 1,751,269 |
| Կանխավճար շահութահարկի գծով | | 44,144 | 44,130 | - |
| Մնացորդներ դրամարկղում եւ բանկերում | 9 | 737 | 174 | 5,492 |
| | | 62,347 | 170,159 | 1,857,848 |
| Ընդամենը ակտիվներ | | 1,802,105 | 1,929,457 | 2,451,690 |
| Սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | | | |
| Կապիտալ եւ պահուստներ | | | | |
| Կանոնադրական կապիտալ | 10 | 587,450 | 587,450 | 587,450 |
| Կուտակված շահույթ | | 831,593 | 933,547 | 1,122,512 |
| | | 1,419,043 | 1,520,997 | 1,709,962 |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 11 | 381,235 | 407,527 | 433,819 |
| | | 381,235 | 407,527 | 433,819 |
| Ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 12 | 1,296 | 296 | - |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | 13 | 531 | 637 | 174,479 |
| Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն | | - | - | 133,430 |
| | | 1,827 | 933 | 307,909 |
| Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | 1,802,105 | 1,929,457 | 2,451,690 |

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2013 թ. սեպտեմբերի 4-ին`*

***ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ*** — ***Տնօրեն***
***ՌՈՒԶԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*** — ***Գլխավոր հաշվապահ***

#### Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 14 | 3,000 | 5,031 |
| Վաճառված ապրանքների ինքնարժեք | | - | (1,776) |
| Համախառն շահույթ | | 3,000 | 3.255 |
| Այլ եկամուտ | | 26,299 | 29,205 |
| Վարչական ծախսեր | 15 | (31,408) | (52,971) |
| Այլ ծախսեր | 16 | (101,493) | (5,375) |
| Գործառնական գործունեությունից վնաս | | (103,602) | (25,886) |
| Ֆինանսական եկամուտ/ծախս զուտ | 17 | 1,667 | (163,079) |
| Վնաս մինչեւ հարկերը | | (101,935) | (188,965) |
| Շահութահարկի գծով ծախս | 18 | (19) | - |
| Զուտ վնաս | | (101,954) | (188,965) |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | (101,954) | (188,965) |

***ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ*** — ***Տնօրեն***
***ՌՈՒԶԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*** — ***Գլխավոր հաշվապահ***

## «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ եւ**
**Անկախ աուդիտորական եզրակացություն**
**«ԳՐԱՆԴ-ԱԿՈՒՄԲ»**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**31 դեկտեմբերի 2012 թ.**

*Պռոշյան 2/1, Երեւան 0019, Հայաստանի Հանրապետություն*
*Լիցենզիա/License N ԱԾ/ATS 072*
*իրավ. հասցե` Գր. Արծրունու 78/3 շ., բն. 47 Հեռ/Tel: (374 10) 229 238*

### Անկախ աուդիտորական եզրակացություն

***«Գրանդ-Ակումբ» ԲԲԸ-ի բաժնետիրոջը,***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գրանդ-Ակումբ» ԲԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

***Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն***

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է` խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

***Աուդիտորի պատասխանատվություն***

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում` ֆինանսական հաշվետվությունների` էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետեւանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը` տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ` ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Կարծիք***

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության` 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը` համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

**Հանգամանքի շարադրում**

Առանց տրուել ներկայացված հարցերի վերաբերյալ վերապահումներ կատարելու, ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքին, որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ավելի մեծ են, քան ընթացիկ ակտիվները: Այս փաստի առկայությունը կասկածներ է առաջացնում Ընկերության անընդհատ գործելու վերաբերյալ: Սակայն հաշվի առնելով Ընկերության գործունեության զարգացման ծրագիրը, ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը կկարողանա ապահովել իր շարունակական գործունեությունը:

***04 սեպտեմբերի, 2013 թ.***

***Անիկ Մարտիրոսյան*** — ***Տնօրեն-բաժնետեր***
***Աննա Գրիգորյան*** — ***Աուդիտոր-բաժնետեր***

#### Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Ակտիվներ | | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 950,141 | 842,430 | 848,576 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 5 | - | 25,000 | 25,000 |
| | | 950,141 | 867,430 | 873,576 |
| Ընթացիկ ակտիվներ | | | | |
| Պաշարներ | 6 | 28,330 | 469 | 469 |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | 7 | 37,179 | 2,553 | 2,717 |
| Կանխավճար շահութահարկի գծով | | 6,229 | 6,229 | 6,229 |
| Մնացորդներ դրամարկղում եւ բանկերում | 8 | 7,048 | 7,504 | 7,951 |
| | | 78,786 | 16,755 | 17,366 |
| Ընդամենը ակտիվներ | | 1,028,927 | 884,185 | 890,942 |
| Սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | | | |
| Կապիտալ եւ պահուստներ | | | | |
| Կանոնադրական կապիտալ | 9 | 17,015 | 17,015 | 17,015 |
| Կուտակված շահույթ | | 32,598 | 54,777 | 46,863 |
| | | 49,613 | 71,792 | 63,878 |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 10 | 549,118 | 588,341 | 627,564 |
| Փոխառություններ | 11 | - | 222,347 | 198,025 |
| | | 549,118 | 810,688 | 825,589 |
| Ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Փոխառություններ | 11 | 414,083 | - | - |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | 12 | 16,113 | 1,705 | 1,475 |
| | | 430,196 | 1,705 | 1,475 |
| Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորութուններ | | 1,028,927 | 884,185 | 890,942 |

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2013 թ. սեպտեմբերի 4-ին`*

***Տնօրեն Սամվել Սահակյան***
***Գլխավոր հաշվապահ Ռուզաննա Հովհաննիսյան***

#### Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Ապրանքների իրացումից հասույթ | | - | - |
| Վաճառված ապրանքների ինքնարժեք | | - | - |
| Համախառն շահույթ | | - | - |
| Այլ եկամուտ | | 39,238 | 39,241 |
| Վարչական ծախսեր | 13 | (36,306) | (31,327) |
| Այլ ծախսեր | | (25,000) | - |
| Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս) | | (22068) | 7,914 |
| Այլ ֆինանսական հոդվածներ | 14 | (111) | - |
| Շահույթ/(վնաս) մինչեւ հարկերը | | (22,179) | 7,914 |
| Շահութահարկի գծով ծախս | 15 | - | - |
| Տարվա շահույթ/(վնաս) | | (22,179) | 7,914 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | (22,179) | 7,914 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ/(վնաս) դրամ | 16 | (540,951) | 193,024 |

***Տնօրեն Սամվել Սահակյան***
***Գլխավոր հաշվապահ Ռուզաննա Հովհաննիսյան***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 04 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան 16.9.2013, գինը` 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: